ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵՕՅ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1 8 7 9

ԹՈՒՆՎԱՐ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1878
ԲԱՂԱՔԱԿԱՆ
ՄԷԹՈՏԻ ՎՐԱՅ
ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԱՐԴԸ
ՀԱՆԴԷՍ ԲԱՅՄԱՆ ՆՈՐԱՇԷՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ՎՐԻՊԱԿ

ԶՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

บทกลอน

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԱՄՈՒԼ

Ը. ՏԱՐԻ 1879 ՅՈՒՆՈՒԱՐ

1878

Անհատական կեանքն այնպէս կ'զանազանի ազգային կեանքէն ինչպէս արուեստական բոլորակի մը շարժումն երկնային մարմիններու շարժումէն՝ որ ծանրութեան և բնական օրինաց հետևութիւնն է։ Բոլորակ մը, շունչան մը կրնայ դառնալ և հնորհալի շրջաններ բնել, միշտ արտաքին զօրութեան մը հնարիւ, սակայն այս շրջանն որչափ ատեն որ մոլորակային դրութեան մը հետ յարակցութիւն չունենայ, իբրև պատահական երևոյթ մը կը ներկայի մեր աչքին, դիսաւոր աստղի կամ ատուպի նման որ՝ թէև վայրուն ու հրապուրիչ, կանոնաւոր ընթացք և մեր երկրի վրայ ազդեցութիւն չունին։

Անհատ մը կրնայ շարժիլ, ծաղկիլ, հարստանալ ու մեծնալ, սակայն այս շարժումն, այս ծաղկումն, այս մեծութիւնն միշտ առանձին շրջանի մէջ կ'մնան որչափ ատեն որ ազգային կենաց վրայ ոչ կ'ներգործեն և ոչ անկից կ'ներգործուին։ Ազգ մը կրնայ մեծատուններ, լեզուագէտներ, արուեստագէտներ, ուսումնականներ, գիտուններ ունենալ և ինքն ոչ մեծատուն, ոչ արուեստագէտ, ոչ լեզուագէտ և ոչ գիտուն լինիլ, երբոր այն անձինք իրենց նիւթական ու մտաւորական ոյժը կ'վատնեն մի միայն անձնական կիրք, վայելք, շահ, փառասիրութիւն գոհ ընելու կամ օտարոտի նպատակի հասնելու համար։

Թէև ընկերութեան մը մէջ ոյժ մը՝ թէ նիւթական և թէ մտաւորական լինի, չչնչուիր, հետքը կ'թողու, ինչ սահմանի մէջ որ դտնուի, սակայն այդ հետքը կբընայ՝ քստատեղոյն՝ իրական կամ երևակայական արդիւնք բերել։ Անապատի մէջ ցանուած սերմը չկորսուիր բայց բան մ'ալ չարտադրեր, ծովը թափուած ոսկին չչնչուիր այլ մեզի համար կորսուած է։ Նոյնպէս երբ անհատական ոյժեր կ'թափուին այնպիսի միջավայրի մը մէջ որ վերարտադրութեան պայմանները չունի կամ այդ պայմաններն ամնշմարելի են, ազգային կենաց վրայ չեն ազդեր, և ազգային կենաց տարրերը մանաւանդ հիմակ կ'կազմուին ոչ միայն կրօնական, դրական ու պատմական յարաբերութեամբ այլ քաղաքական, գիտական, բարոյական ու աղատական տունչութեամբ։

Եթէ այս հիման վրայ ազգային կենաց հին տարրերն 'ի հաշիւ տանուն ինչ ունայնութիւն պիտի դտնենք. պիտի գտնենք անգործ, անարդիւն տարրներ, որոց մէջ ատեպ կ'երևին անհատական փայլուն այլ պաղ անունները, ճոխ անձնականութիւններ, փառամոլ ցոյցեր, մեծանուն առևտրական տուներ, շքաւոր այլ վաղանցուկ յառաջդիմական փորձեր, հռետորական պերճ դրականութիւն, վանական մենաւոր հոսատատութիւններ, մինչդեռ հազիւ կ'երևին հանրական օգտակարութեան գործեր, ազգային մտաւոր ու բարոյական յարաբերութեանց զարգացում, ազգային շահուց համերաշխու-

թեան զգացում և մանաւանդ Հայաստանի վերաշինութեան համար անմիջական դարմաններ։

Այս հին տարիներն անցան կորստեցան վայրապար հայութեան համար, որ անոնց վրայ տխուր ակնարկ մը կ'նետէ և վշտահար տրտում կ'ըսէ. «Ինչու համար այժմեան խելքս ու հեռատեսութիւնս չունենայի և այն ատեն»։ Եւ արդարև կան ազգեր ու թշուառութիւններ որ ինչպէս մարդուս նոյնպէս ազգութեան մը բոլոր էութիւնը ոտոսելով՝ կ'ստիպեն զինք որ նկատէ քննէ իր վէրքերն և անոնց դարման գտնէ, չէ թէ գերբնային օգնութեան, չէ թէ լոկ անհատական աջակցութեան, չէ թէ լիովին օտար խոստումներու վստահելով՝ այլ իրեն մնացած կենսական տարրներու, բարեկիրթ ազգայ'ի գործ դրած միջոցներու ընկերակցութեան, կրթութեան և դիտութեան վրայ յոյսը դնելով։ Ահա այսպիսի յեղաշրջում մ'երևցաւ անցեալ տարի հայութեան ցիր ու ցան անդամոց մէջ որ՝ մինչև այն ատեն բրած միութեան և յառաջդիմութեան մանաւոր ու դոնեհիկ փորձերն անբաւական համարելով՝ ուրիշ աւելի գործնական եղանակներ փնտռեցին նպատակի մը համար որ դեռ անորոշ էր մեր ապագայինպէս։ Այս յեղաշրջումն ոչ ճարտարախօս և հեռատես լեզուները, ոչ կրօնական ու բեմական ճառերը, ոչ ատենական բանախօսութիւնները, ոչ լրագրական յորդորներն, ոչ դաստիարակութեան իրական ուղղութիւն մը տալու համար գիտուն մանկավարժներու դոռ ու դոչումն բերին յառաջ, այլ եւրոպական քաղաքագիտութեան ու գիտութեան, քաղաքական ու պատերազմական ծանր դէպքերու ներգործութիւնը։ Ի զուր կ'գոչէր բանիբուն վարդապետն, գիտուն մանկավարժը, լրագրապետը, դրագէտը՝ թէ ժամ է սթափիլ և աղատութեան, գիտութեան և ընկերակցութեան մէջ Հայաստանի փրկութիւնը փնտռել, առանց այս կամ այն օտար քաղաքականութեան ներշնչութեանց հետևելու, այլ պարզապէս ազգայինպատակի մը, բոլոր հայոց վերաշինութեան նպատակին, ազգային ամեն այժերը միացնելով, բայց այս յորդորներն և կոչումներն արձագանք կ'դանէին միայն յոր-

դորոշներուն ու կոչոցներուն հոգւոյն մէջ և ժողովուրդը կ'շարունակէր միշտ նոյն սովորական և անկերպարան ճամբուն մէջ։

Ահարկու պատերազմը, Արևելեան խնդրոյն կարգադրութեան պատրուակաւ, սոյն խնդրոյն մէջ Հայաստանի բռնած տեղն իր աշխարհագրական դրիչ համար, հարստահարեալ և ստրուկ ժողովրդոց ազատամրական շարժումներն և ազատութեան ակնկալութիւնները, մեր հայրենի երկրին կրած սոսկալի աղէտքն, մանաւանդ եւրոպական ազգերու համակրական ցոյցերն Արևելքի համար, և 'ի վերջէ Տէրութեանց դահլիճներու և լրագիրներու մէջ Հայոց ստացած կարևորութիւնը դրդռեցին, յուզեցին բոլոր միտքերն՝ Ս. Պատրիարքէն սկսեալ մինչև յետին հայ բանուորն, և նոր նոր յոյսեր ծնան ամէն միտքերու մէջ։ Իսկ հարստահարութեանց խնդիրն Հայկական խնդրի անուն առնլով՝ անոր միակլուծումն առ հասարակ ինքնօրինութեան մէջ կարծեցին դնել։ Ուստի հայ քաղաքագէտներ, հայ գրագէտներ, լրագրապետներ, պաշտօնաւորներ, Եւրոպայի հայ դաղթականներ անթարթ աչք կ'դիտէին Թրքо—ռուսական պատերազմին ընթացքն և քաղաքականութեան շուրջն՝ և Հայոց ազգայնութեան, պատմութեան, քրիստոնէութեան, եկեղեցւոյն, մշակութեան պահպանմունքն, անոնց կրած դարաւոր տառապանքն ու Օսմանեան պետութեան ցոյց տուած դարաւոր հաւատարմութիւնը մէջ բերելով՝ Եւրոպայի մեծ տէրութեանց ուշադրութիւնը իրենց վրայ դարձնելու և ազատութիւն պահանջելու համար այլև այլ փորձեր կ'ընէին, պաշտօնական բանակցութեամբ, մանաւոր յայտարարութեամբ, լրագրական յօդուածներով։ Իրաւ է որ ամէն հայու նոյն նպատակը միևնոյն պայծառ դոյներով չէր երևէր, իրաւ է որ ամէնքը միջոցներու դործադրութեան մասին համաձայն չէին, իրաւ է որ Թուրքիոյ հայն և Ռուսաստանի հայն իրենց քաղաքական դրիչ բերմամբ տարբեր կերպով կ'բմբռնէին Հայկական խնդրոյն լուծումը, իրաւ է որ Հայաստանի ինքնօրինութիւն բանլով շատերը կ'խմանային միայն Թուրքիոյ Հա-

յատուցան, որպէս թէ Ռուսիոյ Հայաստանեաց ազգէն ինքնօրէն կամ բաղդաւոր ռուսացած լիներ, և այս պատճառաւ վարանումներ, երկդիմի շարժումներ, յեղյեղուկ որոշումներ սրակաս չէին, սակայն անուրանալի է որ ամենքը Հայաստանի ինքնօրինութիւն քաջալով կ'իմանային ապահովութեան, բարեկարգութեան և բարօրութեան երաշխաւորութիւն մը։ Ամենքն աւելի լաւ վիճակի մը հասնելու տենչն ունէին և այս փափաքն իրացնելու համար զանազան միջոցներ կ'փնտռէին։ Եզական էր հայոց ազգային կեանց մէջ այս տեսարանը, յուսադրական էր այս ընդհանուր շարժումն և ցոյց կը տար որ մանաւոր ճգանց ապաւինելով գործելու երանակն հինցած անցած էր և աւելի կենսական, աւելի ազգաշահ կրակ մը կ'բորբոքէր բոլոր միտքերու և սիրտերու մէջ։

Արդ՝ այս ինքնօրինութեան հասնելու համար Հայոց կողմէ ի գործ դրուած ամենէ ազգու միջոցներն ո՞ր եղան։ Յայտնի կամ անյայտ բանակցութիւններ և աղերսներ, որով Ա. յոթէֆանոսի պայմանագրին մէջ 16դ յօդուածը մուտ գտաւ, այլ և այլ պաշտօնական ու անպաշտօն տեսակներ՝ որ Հայոց պատմական հանդամանաց հետ կ'բացատրէին թէ քանի քանի բարիք կրնան ծադիլ ոչ միայն Հայաստանի այլ նոյն իսկ Թուրքիոյ և Ռուսիոյ համար՝ եթէ Օսմանեան պետութեան հովանաւորութեան ներքև՝ Հայոց շնորհուէր ինքնօրինութիւն, որով Արևելեան խնդիրն ալ իր բնական և վճռական լուծումը պիտի դտնէր, ի վերջէ Պերլինի վեհաժողովին դումարման առթիւ՝ Հայկական պատգամաւորութիւն մ'որու գլուխն էր Խրիմեան Հայրիկ և որ մեծամեծ յոյսեր կ'տածէր և կ'հաղորդէր Ազգին թէ անոր նպատակը պիտի պսակուէր։ Եւրոպայի անկայուն և նաւբ քաղաքականութիւն, ասոնց տերութեանց հակամտութեան շահերու պայքարն, Հայոց բարոյական ներդործութիւնն և անորոշ քաղաքականութիւնն, մանաւանդ Անգլիոյ պաշտօնէութեան պաշտպանողական դիրքն Արևելքի մէջ, Հայաստանի ուրիշ շահ մը չպիտի բերէին բայց միայն Պերլինի դաշնագրին 61դ յօ-

դուածն, որու մէջ շատեր Հայաստանի ապահովութեան, աղատութեան ու բարգաւաճութեան հիմունքը տեսան, մինչդեռ ուրիշներ աղ անոր և մանաւանդ անկլօ—թրքական պայմանագրին մէջ՝ Հայաստանը պարփակող երկաթէ շրջանակ մը տեսան, որու մէկ ծայրն Ռուսիոյ և միւս ծայրն Անկլիոյ ձեռքն լիներ, այնպէս որ, եթէ երբեք այս երկու հզօր տէրութիւններն Արևելքի տիրապետութեան համար օրին մէկը վճռական ճակատամարտը մղէին, սոյն շրջանակը կրնար սեղմուիլ ու խեղդել Հայութիւնը, եթէ սա անկիոյ դուրս ելնելու համար կամխաւ տեսած չլիներ ամեն մտաւորական ու նիւթական պատրաստութիւն։

Հեռատես ու հասուն դրութիւններ մինչդեռ կ'ընդունին մէկ կողմէ որ Հայութիւնն Եւրոպայի դահլիճներու առջև կարևորութիւն ստացաւ, միջազգային դաշնոյ մէջ անուն մը, տեղ մը շահեցաւ, եթէ կ'ողբան միւս կողմէ որ ինչպէս պատերազմի նոյնպէս ներկայ ղենադարի միջոցին՝ սատակ տառապեցան ու կ'տառապին Հայը, սակայն այս հանգրուանն ևս ունին որ օտար օգնութեան վրայ յոյս դնելու, դաշնադիրներու հաւատ ընծայելու տեղ, պէտք է ազգային բոլոր բարոյական մտաւորական և մանաւանդ նիւթական այժերու վրայ կռթնիլ և ազգն այս վոխթորկալի և քայքայուն վիճակէն առաջնորդել դէպ 'ի վերաշինութիւն։

Ծանր ու դժուարին գործ է այս իրաւ, բայց մեռելական հանգարտութիւնն և յուսադրական խաղաղութիւնն աւելի կ'ոպառնան ազգային գոյութեան դէմ քան թէ տառապանք ու թշուառութիւններ, որ կ'շարժեն, կ'դրդռեն սիրտ ու միտք և այս դառն կացութենէ ելնելու համար աւելի ազգու ու յարատև միջոցներ 'ի գործ դնելու կ'դրդեն։

Եւ արդարև՝ Տաճկի Հայաստանի ամեն խարշերէն աղաղակներ, բողոքներ կ'լսուին, որ տեսակ տեսակ ցաւոց, որ տգիտութենէ, անկարողութենէ ու անապահովութենէ յառաջ կ'գան, դարման կ'պահանջեն և վերակենդանութեան վարիաք կ'յայտնեն։ Այս վարիաքը նոյն իսկ եբրևոյթական խաղաղութիւն ու հանդիստ վայելող ռու-

տարնակ ազգայնոց մէջ ալ կայ անշուշտ, սակայն զայն արտայայտելու աղատութենէ զուրկ, գէթ բոլորովին արամադիր կ'երևիս մնուղղակի կերպով ճայնակցիլ ու ողակցիլ մեզ և չքնահայեաց քաղաքականութեամբ յորդորել մեզ որ կարելի եղածին չափ օգուտ քաղենք պարագաներէն և այն առաւելութիւններէն որ միջազգային դաշնադրութիւնները մեզի քիչ շատ կ'ընծայեն։

Այս աղաղակներուն ու յորդորներուն, նոյնպէս դառն փորձառութենէ յառաջ եկած համոզման առջև անտարբեր և անզգայ չմնացին այն ազգայինք որ իրենց դիրքով և ազատութեամբ կարող էին գործել ու նոր զարկ մը տալ ազգային յառաջադիմութեան, քանի որ ինքնօրինութեան հասնելու յոյսերն թերևս կանխահաս էին և պատրանք մնացին։ Այս ազգայնոց մէջ բնապէս առաջին կարգը պիտի բռնէին անխտիր ամեն Պոլսաբնակ Հայք, որոց մէջ նոր եռանդ ու խանդ մը ոկսան արծարծիլ այս տարուոյն ընթացքին մէջ, ազգային վերաշինութեան տարերքը վերակազմելու, որդէն ազգօգուտ ուղղութեամբ կազմուած մէկ քանի նոր ընկերութեանց նիւթական ու բարոյական ոյժ տալու, որպէս զի իրենց նպատակին աւելի դիւրաւ հասնին, և այլ և այլ խորհուրդներ երևնելու, հայրենեաց շահուն համար։ Երկար տարիներէ ի վեր՝ առաջին անգամն էր որ Հայք աչք կ'դարձնէին Հայաստանի, առաջին անգամն էր որ կ'ղգային թէ առանց անոր հայութիւն չկայ, թէև թշուառ, աւերակ, հաշմուած, մասամբ կոտրտուած ու զոհ դացած Հայաստան մ'ունէին իրենց աչաց առջև։ Փափաքելի է միայն որ այն ընդհանուր ճգունքն, այս ազգաշէն խորհուրդներն կիսկատար չմնայն, ինչպէս որ սովէտ մնացած են և մեր վրայ Եւրոպայի տածած անյարատևութեան և քաղաքական ապիկարութեան կասկածները չհաստատուէին։

Պատերազմ մը՝ որ վեր ի վայր շրջեց ամեն դիւանագիտական հաշիւներ, և ամենց անկախութիւն, ոմանց թշուառութիւն ու տարկութիւն բաշխեց, դաշնադրութիւններ՝ որ լուելեայն կ'ընդունին թէ դիտութեամբ միայն խլրտող, նկրտող ազգերն իրենցմէ վեր են և

կրնան որոշ նպատակի ու ազատութեան հասնիլ, տէրութիւն մը՝ որ կ'խոստանայ իր անկախութիւնն, մնանկութիւնն ու հիւանդութիւնը և ասոնց տէրութեանցներհակ շահերու և ազգայնութեանց բուռն ճգանց ներքև ճնշուելով կ'հիւծի ու կ'քայքայի, միջազգային օրէնքներ՝ որ կիսամեռ քաղաքական մարմնոյ մը վրայ չեն կարող ներգործել, և սրտամոգրուած բարենորոգումներն իրագործելու համար գիւանագիտական միջոցներն անզօր դանուելով դարդ՝ ժողովրդոյ վիճակին մէջ ղդալի փոփոխութիւն մը գէպ 'ի լաւն չտեսնուելէ 'ի զատ՝ օրէ օր թշուառութեան ու անկման երևոյթներ յերևան կ'ելնեն, դէպքերու կոյր մղում մ'որ տէրութիւններ ու ազգեր կ'տանի իրենց անցեալ անհեռատեսութեան շնորհիւ պատրաստուած անդունդն, ահա ասոնք այնպիսի ծանր ու խաշոր իրողութիւններ են զոր միայն իր ապագային վրայ անվստահ և յուսահատ, և լոկ ազգային մնայուն մեծութիւնը գգուղ անհիմն այլ փայլուն առաւելութիւններով դահ եղող ժողովուրդ մը չէ կարող նշմարել։

Մենք կ'համարձակինք ըսելու որ Թուրքիոյ հայ ժողովուրդն իր աչքը բացած կ'տեսնէ, կ'տեսնէ իր նախորդ դարերու և մինչև իսկ Արեւելեան խնդրոյն բորբոքած ժամանակը՝ բրած ծանր սխալանքն, զոր նշանակել աւելորդ է, կ'տեսնէ վերջապէս այն օրէնքն ուրով ազգերն նախ բարոյական և մտաւորական և ազգային յարատև ու օգտակար հիմնարկութիւններով կը յառաջադիմեն և կ'յուսանք որ իր բոլոր կարողութիւնն ամփոփելով, իր բոլոր հարուստ, հանճարեղ, դիտուն, տրուեստասէր զաւակներն 'ի հանդէս կոչելով պիտի ջանայ շահիլ այն անդին ժամանակներն որ ազգային մնասի ու անշահ երկպառակութեամբ ու դժտութեամբ անցան, սահմանադրական անօգուտ կռիւներով լցան, վարչական ու դիւանական անդարմադրելի խարհուրդներով վայլեցան, քաղաքագիտական ծուռ ուղղութեամբ վրիպեցան, ազգային իսկական շահուց անդիտակցութեամբ կորան, և նոր տարուն հետ նոր ազգային կեանք մը սկսելով՝ կեանք մ'որու համար ունիսաղ եւրոպա-

կան ժողովրդոց և տէրութեանց, կ'յուսանք որ պիտի յաջողի, որպէս զի Հրլորի այն վիհին մէջ զոր պիտի բանան անշուշտ քաղաքական փոթորիկներն ու երկրաշարժներն, թերևս մօտալուտ ապագայի մը մէջ . . . :

ԲԱՂԱԲԱԿԱՆ

1878

Եւրոպայի տարեդրութեանց մէջ չէ եղած տարի մ'որ այսքան բեղուն լինի քաղաքական զարմանալի դէպքերով, երկրակալական փոփոխութեամբ, առևտրական ճախորդութեամբ, անպատում թշուառութեամբ որչափ 1878 տարին: Փառամոլութիւն, ներհակ շահուց մրցում, ազգայնութեան խլրտում, կոտորած և աւերմունք իրենց ասպարէզ ընտրեր էին թշուառ Արևելքն, ուր հայք ևս այս ընդհանուր անձկութեան, ակնկալութեան և տառապանաց մէջ իրենց բաժինն ունեցան: Քաղաքական ահարկու եղերերգական խաղ մ'էր այս, որու գլխաւոր դերասանները Ռուսիա և Անգլիա էին, մինչդեռ միւս մեծ տէրութիւններն իրև հանդիսատես կ'երևին այսքաղաքական ծանր փոթորկին առջև: Այնպէս կ'երևէր որ արևելեան մեծ պետութեան մը ժամը հնչեր էր և նոր նոր ժողովուրդներ ու արքունն ազգեր անոր աւերակաց վրայ կանգնելով նոր ուղղութիւն, նոր կեանք մը պիտի ստանային: Այս ընդհանուր քայքայման նշաններն ոչ միայն վարչային յոռի կազմաւորութեան, քաղաքական տկարութեան, գանձային սնանկութեան, ժողովրդոց դժգոհութեան և թշուառութեան, աղատական ձկտումներու և մեծ տէրութեան մը հին ատելութեան մէջ կ'տեսնուէին այլև ներքին պատճառներու մէջ, որով երբեմն հզօր տէրութիւններ իսկ անզդայօրէն իրենց կործանման դիմած են, այս կործանման առաջն առնելու միջոցներն բոլորովին անդտանելի լինելով: Վասն զի տէրութիւններն ալ

իրենց երիտասարդական և արբուն հասակներն ունին և անգիտաս իրենց կենաց շրջանը կ'կատարեն աւելի նոր ու առոյգ, աւելի տոկուն, աւելի յառաջադէմ տարրներու դիմադրութեան տեղի տալով։ Սակայն ինչպէս կնճռոտ կերպարան մը կրնայ շպարով ու ներկով չինծու կենդանութիւն մը ստանալ, ինչպէս արմատէն փտած հին ծառ մը մոյթերով կանգուն մնալ, նոյնպէս կրնայ կենսական ուժերէ զուրկ տէրութիւն մը ապրիլ իր կացութեան և քաղաքականութեան բերմամբ։ Ուստի Արևելքի եղերերդութեան վերջին արարուածն առ կախ մնացդերասանները քաշուեցան, թէև գաղտնի իրարու շարժումները կ'դիտեն և ամոքիչ դարմաններ կ'տան այն վէրքերուն որ ինքնին մահաբեր են։

1878 թուականը ախուր երևոյթներով կ'սկսի և թշուառութեան ու ճախորդութեան նշաններով կ'վերջանայ։ Ռուսիա յաղթական 'ի Բլէվնա, ահ ու սարսափ կ'ազդեր ոչ միայն Թուրքիոյ այլ և բոլոր այն տէրութեանց որ շահ ունէին Արևելքի մէջ։ Ի հարկէ այս յաղթութենէ օգուտ պիտի քաղէր, և արդէն Կուրքօ, Միլանի և մանաւանդ Սքոպէլէֆ անվեհեր կ'քալէին դէպ 'ի հարաւ։ Կուրքօ Պալքաններն ելնելով Սիւլէյման փաշայի թևն Սոֆիայէն կ'կտրէր, Սքոպէլէֆ Սկնովայի մէջ Թուրք զօրքը խորտակելով դէպ 'ի Ռումելի կ'դիմէր։ Բ. Դուռը դիմադրելու անյոյս՝ Սկրմէր ու Նամիկ փաշաներն կ'ուղարկէր Ռուսաց բանակն հաշտութեան պայմաններ առաջարկելու, մինչդեռ Զարին դաշնակիցները Թուրքիայէն իրենց համար բաժին մը հանելու կ'ճգնէին, և՝ գինադուլի միջոցին՝ Յունաստան Թեսալիոյ մէջ կ'խլրտէր և կողպատին մասնակից լինիլ կ'ուզէր, սակայն այս պատերազմէն կ'քաշուէր միայն Անգլիոյ ազդեցութեամբ և իր պահանջմունքն 'ի կատար հանելու ակնկալութեամբ։ Մինչդեռ Ադրիանուպոլիս Ռուսաց ձեռքը կ'ընկնէր, բնիկ Թուրքերը կ'հալածուին պուլղարներու և խաղպաներու կողմէ և իրենց երկիրը թողլով մայրաքաղաքը կ'դիմեն Թշուառ, սովալուկ վիճակի մէջ։ Ռուսաստան իր յաղթական զօրքն՝ յառաջ կ'քշէ մինչև Զատալճայի գիծն և ահ ու դողի մէջ կ'ձգէ բոլոր մայրաքաղաքին սպառնալով, նոյն միջոցին որ Անգլիա անձկութեամբ կ'դիտէ այս յառաջացումը։ Ուստի Մարմարայի ծովը կ'զրկէ նաւատորմ մը պատուիրելով իր ծովակալին որ՝ եթէ Ռուսք Կէլիպոլուի կամ Պոսֆորի ափրանալու

փորձ վարձելու ելնեն ամենայն զօրութեամբ դիմադրել։ Նոյն միջոցին Բ. Դուքն Ռուսաց սպայակոյտին հետ կ'բանակցի գաղտնի՝ խաղաղութեան նախագիծ պայմանները դնելու։ Մայիսի մէջ կ'հրատարակուի Այսթեֆանոսի դաշնագիրն որով Թուրքիա իրապէս Ռուսիոյ հպատակ իշխանութիւն մը պիտի դառնար, բոլոր Պուլղարիա մինչև Թրակիոյ սահմաններն իր անկախութիւնը պիտի ստանար, ռուսական ազդեցութեան ներքև։ Ռուսիա Հայաստանէն մեծ կտոր և զօրաւոր դիրքեր պիտի ընդունէր և պատերազմի ահագին տուգանք մը։ Այս դաշնագիրն՝ որ ընդհանուր զարմանք կ'պատճառէ բոլոր տէրութեանց, թէև անոր առջև անտարբեր դիրք մը բռնած կ'ելուէին, Ռուսիոյ ներքին նպատակը բոլորովին երևան հանելով՝ Անկլիոյ հասարակաց կարծիքը բոլորովին կ'շրջէ, և Մեծն Բրիտանիա որ մինչև այն ատեն վարանեալ և երկդիմի ընթացք մը բռներ էր, յանկարծ կ'բորբոքի և Եբրոպայի քաղաքական շահուց և հաւասարակշռութեան իրրև սխոյեան յառաջ կ'կանգնի։ Լորտ Սալիսպրրի շրջաբերականով մը Այսթեֆանոսի դաշնագիրն միջազգային օրինաց ներհակ հրատարակելով վէճի ներքև կ'ձգէ և իր խօսքն աւելի ազդու ընելու համար պատերազմի պատրաստութիւն կ'տեսնէ։ Հնդկաստանէն զօրքեր Մալթա կ'ղրկուին, Անկլիոյ մէջ պահեստի զօրքն 'ի զէն կ'կոչուի, և Անկլո-ռուսական պատերազմի մը նշանները կ'երևին։ Կորչաքօֆ իշխանին պատասխանն առ լորտ Սալիսպրրի չգօրեր Անկլիոյ սպառնական դիրքը փոխելու, որ կը պահանջէր նոր դաշնագրին ամբողջական քննութիւնն ու վիճաբանութիւնն տէրութեանց խորհրդի մը մէջ։ Ռուսիա պատերազմի անտարամադիր՝ կ'դիջանի, իր դեսպանն՝ Շուվալօֆ՝ 'ի Լոնտոն լորտ Սալիսպրրիի հետ կ'բանակցի համաձայնութիւն մը դոյացնելու և 'ի վերջ եօթը տէրութեանց պատգամաւորներ կ'գումարուին յունիսին 'ի Պէրլին Պիսմարդ իշխանին նախագահութեամբ, որպէս զի Այսթեֆանոսի դաշնագիրը քննեն։ Ուստի ամէն մ'եւք՝ Պէրլինի դաշնագիրն երևան կ'ելնէ, որով Սև ծովու բերանը պահպանէրութիւնն իրրև անկախ կ'ճանչցուի, Պուլղարիա երկու մասի կ'բաժնուի, Բոսնիա և Հերսէք Աւստրիոյ, Տօպրուճա Ռումանիոյ, Պէսարապիա՝ անորմէ առնուելով, Պաթում, Կարս, Ռուսիոյ տալ կ'որոշուի։ Գարատաղ իր անկախութիւնն և Յունաստան սահմանաց ուղղութեան

տրամադրութիւն մը կ'ստանայ, մինչդեռ Ասիոյ Տամկաստանի հայաբնակ երկիրներն, նոյն դաշնագրին 61դ յօդուածին ուժովը՝ Տէրութեանց հաւաքական պաշտպանութիւն և բարենորոգմանց ապահովութիւն կ'ընդունի։ Պէրլինի դաշնագրին հրատարակումէն ետք՝ դուրս կ'ելնէ Անկլօ-թրքական պայմանագիր մ'որ դաղտնի ստորագրուած էր՝ Մեծն Բրիտանիոյ և Թուրքիոյ մէջ, և այս պայմանագրով՝ Կիպրոս կղզին իրեն կը տրուէր, որչափ ատեն որ Ռուսիա Պաթումն ու Կարսը պահէր, և այս պայմանաւ որ Անկլիա Թուրքիան 'ի հարկին պիտի պաշտպանէր, եթէ նա պէտք եղած բարենորոգումներն կատարելու ձեռնարկէր։ Ինչպէս Պէրլինի դաշնագիրը նոյնպէս Անկլօ-թրքական պայմանագիրն ընդհանուր դժդոհութեան առիթ կ'լինին։ Տեղ տեղ անոնց գործադրութեան դէմ ելած արդելքները հաղիւ կ'հարթուին, տեղ տեղ միշտ կան ու կը մնան։ Աւստրիա զինու զօրութեամբ ձեռք կ'ձգէ Պոսնիան, Ռոտորի Ռումակները կ'ապստամբին, սլաւեան տարրին զօրանալուն դէմ Յոյնք կ'բողոքեն ու կ'զինուին, Ռումէլիի Պուլղարները եղած բաժանումը չեն ընդունիր, Պաթումի լազերն ակամայ կ'հնազանդին իրենց նոր տիրապետին, Հայք 61դ յօդուածէն դրեթէ դժգոհ՝ կ'բողոքեն Պէրլինի Վեհաժողովին որ իրենց դատին օրինաւոր վճիռ մը չէր տուած, և միշտ կ'տառապին. սոյն հարստահարութեանց տակ, որոց դէմ իբրև դարման կ'առաջարկէին Էնֆօրսիոն՝ մ'որ, թէև Անկլիոյ հասարակաց կարծեաց առջև քիչ շատ կարևորութիւն կ'ստանայ, բայց կառավարութեան շահադէտ ու միակողմանի քաղաքականութեան շնորհիւ անդործադրելի կ'մնայ։ Հաղիւ թէ Անկլիա արևելեան հանդոյցը կտրել կարծէր՝ որ Աֆղանստանի հետ պատերազմ կ'սկսէր։ Ֆրանսա՝ իր դրացիներուն կրած առևտրական դժուարութիւններէ զերծ, արևելեան հնձառու խնդիրներու առջև դրեթէ անտարբեր, իր հասարակապետութիւնը զօրացնելու կ'ձգնի։ Միշտ խոհեմութեամբ կ'յառաջանան ազատականներն և Կանպէդա վստահ լինելով որ հանրավարական դրութիւնը հետզհետէ արմատներ կ'ձգէ Ֆրանսայի մէջ, չփութար հիմնական փոփոխութիւններ ընելու։ Ուստի միայն կառավարութեան պաշտպանութեամբ ընտրուած երեսփոխաններու ընտրութիւնն անվաւեր կ'հրատարակուի, հրապարակի վրայ օրադիր ծախելու մասին դրուած արդելքը

կ'վերցուի, և 'ի հարկէ քիչ քիչ դատարակութեան մէջ կղերին տացած արտօնութիւնները պիտի ջնջուին։ Արդէն իր անսպառելի հարստութիւնն ու բարօրութիւնն, դինուորական զօրութիւնն, իր արուեստահանդէսը և Բարիզը զարդացնելու համար Գ. Ֆրէյսինէդի փառաւոր շինութեանց յատակագիծները ցոյց կ'տան որ Ֆրանսա եւրոպական ազգութեանց խորհրդին մէջ իր կորուսած մեծ դիրքը շահելու կ'նկրտի, և արդէն Վեհաժողովին ժամանակ, իր պատգամաւորներուն ձայնն՝ յունաց և հայոց դատին 'ի նպաստ, տարուկ ու թշուառաժողովրդոց աչքն իր վրայ կ'դարձնէ և համակրութիւն կ'գրգռէ։

Գերմանիա՝ ընդհակառակն, իր եսական քաղաքականութեամբ միայն անվստահութիւն ու երկիւղ կ'ազդէ՝ և իր ներքին ընկերհաշտական շարժումները կառավարութեան բռնասիրական ձկտումները կ'սաստկացնեն։ Կայսեր կենաց դէմ Նոպիլինի փորձն, որ Հոդէլի ապարդիւն դաւանանութեան կը յաջորդէր, ազգային ժողովին լուծման և նոր ընտրութեան առիթ կ'տայ, որով ազատական ժողովականները կ'քիշնան, և ընկերհաշտականներու դէմ ծանր օրէնքը, Ս. Պապին հետ կրօնական խնդիրներու մասին համաձայնութիւն մը դոյացնելու և ներքին անտեսական ու առևտրական ձախորդութեանց դէմ իբրև դարման ազատ փոխանակութեան դէմ եղած փորձերն Պիսմարքի կողմէ, ընդհանուր դժգոհութեան տրտունջներ կը գրգռեն և գիտական ու յառաջադիմասէր աշխարհի զարմանք կ'պատճառեն՝ որ Գերմանիա իրական գիտութեանց մէջ ըրած յառաջադիմութեամբ հանդերձ, հին և մութ դարերու վայել գործերով կ'զբաղի և իր անունը կ'արատէ։ Իտալիոյ Վ. Էմմանուէլ թագաւորին և Պիոս Թ. Ս. Պապին մահն մեծ ներգործութիւն մը չունեցաւ գործերու ընթացքին վրայ։ Լեւոն ԺԳ Ս. պապն իր նախորդին քաղաքականութիւնն կ'հետևի, իսկ Ումպէր Դ. իր հօրը ժողովրդականութիւնը կ'վայելէ։ Աղգային ժողովին մէջ ազակողմեանք անզօր են և ձախակողմեանք երկպառակ, ուստի և պաշտօնէութեան փոփոխութիւնն յաճախ։ Մինչդեռ Թուրքիա բարենորոգումներու շաւղին մէջ մտնելու կ'վարանի, Եգիպտոսի Իսմայիլ իր իշխանութիւնը սահմանադրաբար վարելու կ'սկսի և իր անձնական կալուածքն թողլով որպէս զի պարտուց հատուցման գործածուի, պաշտօնէութեան գլուխ կ'ընտրէ Վսեմ. Նուբար փաշան, դանձուց պաշ-

ոնեայ անկլիայի մը և հասարակային դործոց պաշտօնեայ ֆրանսայի մը, և այսպէս ներքին բարեկարգութեան նոր թուական մը կ'սկսի։

ՄԷԹՈՏԻ ՎՐԱՅ*

Չենք ուրանար որ՝ ինչպէս ամեն բան՝ կրօնն ալ կատարելագործութեան ենթակայ է, քանի որ մարդկութիւնը մնացական չէ, սակայն չենք ընդունիր՝ Մէթոդի հեղինակին պէս՝ որ պէտք է և կարելի է զայն դրչի ծայրով սրբել մարդկային սրտէն ու հիմնարկութիւններէն, վասն զի կարելի չէ ջնջել մարդկային սիրտը, և ինչպէս որ Էտ. Հարդման ըսէ՝, ամեն մարդ կրօնական տրամադրութեան մը սերմն ունի. չենք ընդունիր անթոյլտուութիւնն (intolérance) և ասոր հետևանք եղող՝ հալածանքը թէ դրչով լինի թէ սրով, վասն զի կրօնական կատարելութեան, լուսաւորութեան և համազգային սիրոյ էական՝ մէկ պայմանն ալ խղճի ազատութիւնն է։

Երբ ժողովուրդները՝ շատ դարերէ ետք՝ դէպ ան և իմանան որ կրօնական խորութիւններն ու հալածանքը մարդկային ազիտութեան ու չհամոզութեան արդիւնքն են, երբոր հասկնան որ կրօնը՝ հոգևորական միապետութեամբ և մէթոդական դրութեամբ՝ միութեան վերածելու փորձը պարզապէս ստրկութեան տանող ճամբան է, երբ ըմբռնեն լիովին որ անսահման ազատութեան մէջ կ'զտուի այն և ճշմարիտ լուսաւորութեան կ'յարատևի, այն ատեն ալիտի սթափին և պիտի թողուն որ ամեն մարդ, ամեն ազգ իր ընտրած իդէական կամ իրական էակը պաշտէ, և չէ թէ արտաքին ձևապաշտութեան միակերպու-

*Շարունակութիւն։ Տես դիտողութիւնք ամսագիրս։

թեան ջնորհիւ, այլ սրտով, զգացումով իրարու պիտի միանան։ Այն ատեն թէ եկեղեցական և թէ աշխարհական բուն իշխանութեան, պաշտօնական կրօնից և տրքուանի երկնային իրաւունց օրը պիտի տնցնի, ազգային անկախ եկեղեցիներու դարը պիտի յաջորդէ և մարդկային ազգը քարոյական միաբանեան տարերքը պիտի գտնէ։ Բայց այս յեղափոխութիւնը Մէքենաներով չիատարուիր, հրով և որով չիրանար, այլ գիտութեամբ, այլ ազգերու յառաջադիմական բարեբաղդութեան օրինօք, որու կարեւորութիւնը կ'հաշակէ սակայն Մէթոտի հեղինակն և միայն ժամանակներն ու միջավայրերն իրարու հետ կ'շփոթէ։

Նոյն իսկ Հէրբէրթ չ'ճանչնար միթէ կրօնի ներգործութիւնն երբոր իր մէկ առեղնաբանութեան մէջ կ'ըսէ, «Ամեն հաւատարիմ ու եկեղեցիէ դուրս, բնական ճշմարիտ կրօնի մը սերմը կայ ամեն մարդու սրտին մէջ։ Մեր էութեան ամենէ աղնիւ կողմերուն անրաժանելի կերպով կապուած է այն։ Իր աւաջին պատուէրը սէրն է, մեր բնական եսասիրութեան ջնջումն է 'ի նպաստ մեր ընկերին և մարդկային ազգի բարօրութեան նկատմամբ, որու անդամներն ենք։ Այս բարոյական օրէնքն ամեն եկեղեցիներէ հինն է»։ Քրիստոսի բուն կրօնի հիմն, որու վրայ Աղեքսանդրեան և միջին դարու փիլիսոփայութիւնն ատեն ատեն աստուածաբանական այնքան խորհուրդներ ու ձևեր բարդեցին, ի՞նչ կ'պատուիրեն մեզ եթէ ոչ սէր, մարդկային ազգի համար, ամեն ձևական և արարողական սնոտի ցոյցերէն զերծ՝ սէր, սրտի հաւատ, որու հասած չեն տակաւին այն ժողովուրդներն որ ինքզինքնին քրիստոնեայ կ'անուանեն, թէև իրօք միշտ աւանդական աւելորդապաշտութեամբ կ'սնանին։ Երբոր այդ սէրը հաստատուի, այդ բարոյական կենդանութիւնը ժողովրդոց սրտին մէջ դրոշմուի, սէր մարդկութեան, ազատութեան, գիտութեան համար, այն ատեն պիտի հասնի՝ ըստ մեզ՝ ապագայի այն կրօնն որու տարերքը կ'ջանայ գտնել Հարդման* իր Ապագային կրօնն անուն գրքին մէջ, Քրիստոսի միաստուածական և Պուտհայի բազմաստուածական կրօնից մէջ փնտռելով։ Բայց որչափ որ Աղաստի և այլոց տեսութիւնները քրիստոնէութեան վրայ՝ նոր դոյներով կ'ներկայացնէ և՝ Մէթոտի հեղինակին հակառակ՝ խոստովանելէն ետև թէ՝

*La Réligion de l'Avenir. ED. de HARTMANN.

գլխաւորապէս քրիստոնէական այսինքն իրական դաստիարը որ կ'հաւատայ ժամանակի, պատմութեան և բարեշրջութեան, իրաք դերազանց է հնդկային կրօնական դաստիարէն, և չապէս այս դերազանցութիւնն է, որ ասիական անշարժութեան առջև՝ արիաբար մղուած պատմական յառաջդիմութեան պայմանն է, և որ քրիստոնեայ ժողովուրդներն ընդհանուր պատմութեան յառաջդիմութեան արդի գործակատարներն և ներկայացուցիչներն ըրաւ, Հարցման կ'յայտնէ նաև, իր նոյն գործին մէջ՝ թէ հաղուագիւտ է որ մարդ մը կրօնական տրամադրութեան սերմը չունենայ, թէև ամեն մարդու վրայ տարբեր կերպով կ'ներգործէ, թէ դերբնականութիւնը գիտութեան կ'վերաբերի, թէև ամեն մարդու որուած չէ գիտութեան հասնիլ, նա մանաւանդ դերբնականութեան գիտական ուսման և ապա կ'յարէ. «Շօբէնհօյր սքանչելի կերպով ցցուց, թէ ամեն մարդ դերբնականութիւն մ'ունի, ամեն մարդ դերբնային յղացումներու ոգէ ունի իր կրօնական սիրտքը գոհ ընելու համար։ Այս դերբնականութիւնը զոր կարելի է անուանել ժողովրդային դերբնականութիւն, կրօնն է . . . . Արդ կրօնը ժողովրդեան բոլոր փիլիսոփայութիւնը կ'պարունակէ, այն կ'ապդարարէ շարունակ անոր որ ուսելէ, խմելէ և քնանալէ աւելի բարձր բան մը կայ, թէ այս զգալի անցաւոր աշխարհն առանց նպատակի չէ, այլ յաւիտենական սկիզբի մ'արտայայտութիւնն է, որու միայն չիրթ ստուերը կ'տեսնենք այս տեղ։ Բոլոր կրօնից պաշտօնն է այս զգացումը հոգւոյ մէջ արթուն պահել. . . ։»

Յայտնի է թէ աշխարհի գրեթէ բոլոր կրօններն այս իտէական՝ բանականութեան անխմանալի խորհուրդներով շրջապատելէ ետև՝ այնպիսի երևումներէ անցած են որ այսօր շատերը լոկ արտաքին ցոյցեր և պաշտաման այլ և այլ հանդիսաւոր արարողութիւններ դարձած են։ Ատուտաբաններն են որ կրօնից այս չոր ու ցամաք ուղղութիւնը տուին, այնպէս որ բարոյապէս չներգործեր շատ տեղ մարդկային կենաց վրայ։

Արդ՝ Եւրոպա որ այնքան կ'պարծի իր նոր գիտութեամբ, կարող եղա՞ծ է քակել կրօնական շղթաներն որով իր բարոյական ու մտաւորական անկախութիւնը կ'ճնշուի։ Տակաւին իր բոլոր քաղաքական, և նոյն իսկ գիտական հիմնարկութիւն-

ներն՝ հին կրօնական դրութեան վրայ հիմնուած են, դեռ իր բոլոր դպրոցներուն, համալսարաններուն մէջ՝ մէկ կողմէ դիտութեան նոր դիւտերն ու հրաշալիքը կ'աւանդուին, միւս կողմէ աւանդական պատմութիւններ, զորս դիտութիւնը կ'ջրէ։ Ընդհանուր վերանորոգում մը՝ արդի դիտութեան պահանջումներուն համեմատ՝ թէ դպրոցական ծրագիրներու մէջ, թէ օրէնսդրական կարգադրութեանց մէջ, թէ կենաց այլ և այլ նպատակներու մէջ՝ դեռ ևս դրեթէ պարզ տեսութիւն մ'է Եւրոպա, իրականութենէ հեռի և միայն մի քանի դիտուններու վիճակութեանց առարկայ։ Երբ շատ տեղ Եւրոպայի կրթական, օրէնսդրական և քաղաքական բոլոր հաստատութիւններն, երբ նոյն իսկ ընկերական հիմունքը դրեթէ հակասական դրութեան մէջ են. միթէ խեղճ Հայո՞ց մնացած է հիմնովին յեղաշրջել իրենց արդի կենաց պայմաններն և Մէնոսի հեղինակին յատակագիծն 'ի գործ դնել։ Ըստ մեզ՝ այդպիսի բան մը պահանջել հայերէն պատմական բարեշրջութեան օրէնքն անդիտել է, յաջորդական յառաջադիմութեան մէթոտն անտեսել է։ Դրական յեղաշրջումները գրչի ծայրով չեն կատարուիր և ուրիշ պայմաններու կարօտ են, պայմաններ որ անդդայօրէն՝ կրթութեան, դաստիարակութեան և դիտութեան ներդործութեամբ պիտի յաջորդեն հետզհետէ այն պայմաններուն որոց մէջ կ'ապրինք։

Ամեն ժողովրդեան գլխաւոր տարերքն իր հիմնարկութիւններն են, թէ բարոյական, թէ կրօնական, թէ քաղաքական, թէ պատմական հանդամանաց վրայ հիմնուած լինին այդ տարերքը։ Իրաւ է որ՝ ըստ ժամանակին ու տեղւոյն՝ այդ տարերքը կ'փոխուին, տակաւին ուշադրութեան արժանի կէտ մ'է թէ ժողովուրդ մը կրնա՞յ յանկարծ և տաւանց պատրաստութեան իր դոյութեան արդի միջոցները փոխել և վերին կատարելութեան հասնիլ։ Պատմութիւնը մեզի կ'ցուցնէ որ ահարկու պատերազմներ, արիւնահեղ յեղափոխութիւններ չեն կրցած ժողովուրդ մը տպիտութենէ յանկարծ լուսաւորութեան, տարկուիմենէ ազատութեան, թշուառութենէ բարգրութեան տանիլ։ Եւ հիմակ իսկ կարելի չէ, դիտութեան լուսով անգամ, նմանօրինակ կանոններ սահմանել որ և է աղգի յառաջադիմութեան համար, քանի որ ամեն ժողովուրդ տարբեր բնաւորութեան, տարբեր երկրի, տարբեր սովորու-

թեանց և հիմնարկութեանց տէր է, և իրեն յատուկ միջոցներով կրնայ միայն ապրիլ։ Գալով Հայ ժողովրդեան՝ ինքն ալ ունի իր գոյութեան մի քանի պայմաններ, ինչպէս գլխաւորապէս կրօնն, պատմութիւնն ու գրականութիւնն, որ թէև տկար ու փոփոխական, սակայն եթէ բոլորովին ջնջուին աւանց անոնց տեղ բան մը դնելու, հայը բացը պիտի մնայ և աւելի հզօր ու ազգու տարրներու մէջ պիտի տուայտի։ Եւ միթէ օգտակա՞ր է, ոչմիայն Հայուն այլ և ընդհանուր մարդկութեան՝ քանդել ժողովրդեան մ'արդի գոյութեան պայմաններն, որ ուրիշ ազգութեանց պայմաններուն մէկ մասը կը կազմեն, և որով պիտի նկրտի մարդկային յառաջադիմութեան գործին աջակից դտնուիլ, աշխատութեան բաժանման օրինաց։

Ներկայ պարագայից մէջ՝ երբ հայն հայրենիքէ, քաղաքական դրութենէ, փայլուն գրականութենէ և դիտութենէ զուրկ՝ իր կրօնին, իր պատմութեան վրայ կռթնելով կ'ներկայի Եւրոպայի և ուրիշ աստիճանակից ժողովրդոց արուած ազատութենէ և անկախութենէ մաս մ'ալ իրեն համար կ'պահանջէ, ելնել այդ կրօնական հիմնարկութիւնն ու պատմութիւնը հարուածել ոչ միայն դիտութեան սուրն դատապարտելի ձեռնարկութիւն մ'է այլ և քաղաքականութեան, ու շատ դիտակար թէ ազգին և թէ մարդկութեան, քանի որ այն միջոցներն որով հայերը քիչ շատ կարևորութիւն, համակրութիւն և պաշտպանութիւն կ'ջանան շահիլ եւրոպական տէրութեանց և ժողովրդոց առջև՝ կարող են ուրիշ աւելի զօրաւոր ու հիմնական միջոցներ ձեռք ձգելու օգնել, միջոցներ որոց մէջ գերագոյնն է ազատութիւնն ու ինքնօրինութիւնը, յառաջադիմութեան և լուսաւորութեան երկու գլխաւոր գրգիռներ։ Եւ արդարև՝ ճիշտ այն միջոցին որ Խրիմեան Հայրիկ՝ իբրև Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայկական խնդրոյն ներկայացուցիչ՝ իր սրտաշարժ ձայնով Հայոց կրօնական ու քաղաքական շահասակութիւնը կ'հաչակէր, Մէնոռի հեղինակն այդ ձայնին դէմ կ'ելնէր և այսպէս ոչ միայն ազգին զգացումները կ'վիրաւորէր և անոր ազատութեան ակնկալութեանց հիմը տապալել կ'ուզէր այլ և իր առաջադրած նպատակին հակառակ կ'գործէր անուղղակի կերպով, և ազատութեան հասնելու մէկ միջոցն հարուածելու առեն գիտութիւնը կ'քարկոծէր։

Գործի մը ներքին արժէքը՝ եթէ ունի, կ'նուազի երբ անժա-

մանակ Երևի։ Մէթոտը դժպատեհ միջոցի մը մէջ Երևան եկաւ և ինչպէս գործը հայոց համար անօգուտ նոյնպէս ներգործութիւնն ընդհանրապէս տխուր և ցաւալի եղաւ։ Իբրև գիտուն՝ Մէթոդի հեղինակը. կրնայ շատ բան խորհիլ, գտնել ու գրել, բայց իբրև մարդ՝ մանաւանդ իբրև հայ՝ պարտաւոր է նկատել Հայոց անմիջական պիտոյքը, փափաքներն ու անձկութիւններն և ցաւակցելով այնպիսի դարմաններ տալ որ բուժելու տեղ չսպաննեն։

Զենք ուզեր աւելի երկարել մեր խօսքն, և կ'յորդորենք Մէթոդի հեղինակն որ՝ եթէ կ'փափաքի իր տաղանդին ու գործունէութեան ճարակ տալ և ազգին իրական ծառայութիւն մ'ընել, 'ի մօտուստ քննէ անոր Նէրկայ կեանքը, նիւթական ու բարոյական վիճակն, անմիջական պիտոյքն։ Այն ատենպիտի համոզուի որ այդ կեանքը վերաշինելու, այդ վիճակը բարելաւելու, այդ պիտոյքն հոգալու յարմար եղանակն ալ մասնաւոր գիտութիւն մ'է և պիտի տեսնէ որ գործ չպիտի պակսի իրեն ազգային դաստիարակութեան, տնտեսագիտութեան, ճարտարութեան և նոյն իսկ գիտութեան սահմանին մէջ։

ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԱՐԴԸ*

ԻԵ

«Ներսէս արդէն պատրաստ էր մեկնելու, Աստո՛ւ, բայց ո՞ւր պիտի երթար, ոչ ոք դիտէր։ Պատգամաբերին բերած լուրը ժպիտով մ'ընդունեց և պոռաց.

«—Բաջեր, դուք ալ պատրաստ եղի՛ք։ Երևան ու Նախիջևան ընկան, Բասքէվիչ Դավրէժի ճամբան է, բայց մեզի համար պայքարը նոր կ'սկսի։ Հայութիւնը վտանգի մէջ է, պարսիկներն անչուշտ հուր կ'տեղան հայ չինականներու վրայ, դուք պիտի լինիք անոնց պաշտպանը։—

«Ցետոյ երկու տող գիր գրեց և պատգամաբերին յանձնեց։ Պատգամաբերը թռաւ գնաց և ինքն ալ ծանրաքայլ ճամբայ ելաւ։ Մեր թեն ու հոգին էր Ներսէս, բայց նա մեզմէ կը բաժնուէր։ Իսկոյն մեր դունդերն ամփոփելով կարգի դրինք ու սպասեցինք։ Հետևեալ օրը կանուխ հրաման մը հասաւ մեզ որ Զօրայի ուղղուած էր Բասքևիչ զօրապետին կողմէ։

«—Զօրացդ մէկ մասը Նուրիճանի զրկէ. սա պաշտօն ունի «Միւնեաց ու Գողթն դաւառին հայերը պաշտպանել Պարսից «դէմ, որ զօրաւորին դէմ անզօր՝ իրենց վայրոյթը տկարներու «վրայ թափելու կ'պատրաստուին։ Դու դունդ մը զօրքով դնա «Բաղաքի–քարը բռնէ և այն տեղ իմ հրամանիս սպասէ։ Դավ«րէժ արդէն իր դռները մեզի կ'բանայ, խաղաղութիւնը կը «կնքուի մէկ քանի օրէն և Հայաստան իր աղատութիւնը կը «գտնէ, Աստուծոյ շնորհիւ և մեծափառ կայսեր զօրութեամբ։»

«Անչուշտ Ներսէսի մասը կար այս հրամանին մէջ, զոր անմիջապէս կատարելու ելանք։ Սակայն մեզ իրարմէ զատելու և մեր զօրագունդը բաժնելու հրամանին մէջ նենգութիւն կը նշմարէինք, և կէտ առ կէտ զայն գործադրելու կ'վարանէինք։ Նա մանաւանդ մեր ուխտին հակառակ էր իրարմէ բաժնուիլ. անլոյծ էր մեր ուխտը։ Ուստի խորհուրդի նստանք։ Նուրիճան

մեր ոգնութեան կարօտ չէր ըմբոստ և ապստամբ պարսիկ-ները ղրկելու և Գողթն գաւառի Հայոց կեանքն ու ապագան-քը պահպանելու, քանի որ բաւական զօրք ունէր, մինչդեռ Բաղաբերդն որ տակաւին բերդ մ'էր մեծ զօրութեամբ միայն կարելի էր գրաւել։ Նոյն միջոցին Զօրայ կ'մտմտար, Աւագ Բաղաբերդի գիրքը կ'գծէր, Հերենց իր զէնքը կ'մաքրէր, Գուր-գամ կ'ծխէր, Ապրսամ սատունցւոյ երգ մը կ'մրմնջէր, ես Բաղաբերդի հեռաւորութիւնը կ'հաշուէի, իսկ Նուրէմ՝ մեզ-մէ քիչ հեռու քարի մը վրայ նստած, շորս կողմի լեռներն ու ձորերը կ'դիտէր և տակեն տակեն Զօրայի վրայ ակնարկ մը նե-տելով կ'հաւաչէր։

«Ցանկարծ Ապրսամ երգը կտրեց և ըսաւ։

«—Ցիրաւի կտրուկ մարդիկ չենք, ծանր խնդրոյ մ'առջև կը գտնուինք, վտանգ կայ, կրակ կայ, և ահա մին գլուխը ծառած կ'խորհի, ո՛վ գիտէ ի՞նչ, միւսը կ'ծխէ, ուրիշ մը զէնքը կ'սրէ, այս կ'գծագրէ, այն կ'մրմռիէ, ես ալ երգելու սիրեր էի։ Այս մեր վիճակը հայերու պտտիերն է։ բուն նպատակը մէկդի կը թողուն և ուրիշ բանով կ'զբաղին։ Բայց պէտք է որոշել մեր ընելիքը։ Իմ կարծիքս է խմբովին և անքաժան Բաղաբերդ երթալ և Բասքէվիչի հրամանին մէկ կողմը կալել է, որ չիրլ-ուինք։ Ծուղակ կայ գարծին մէջ։ Ներսէս մեզի չպատուիրեց բաժնուիլ ու տկարանալ։ Առնենք ուրեմն մեր զօրքն ու յա-ռաջ անցնինք —։

«Ամենքս հաւանեցանք Ապրսամի խօսքին։ Անմիջապէս ճամ-բայ ելանք։ Գէտք էր արագ հասնիլ Բաղաբերդի առջև, և պարսիկներն անպատրաստ ու անդէն գտնել։ Բայց ամենէն կարճ ճամբան դիւրինը չէր։ լեռներ, կիրճեր ու ձորեր կա-յին մեր դիմացը։ Ճահուկէն հեռանալով զարկինք Հայոց Զոր և անդուլ ընթացքով՝ մէկ օրուան մէջ գտանք Բաղաբերդը, և անոր մօտ Վահանու Քանդը մտանք, որ աւերակ և ամայի էր։ Բաղաբերդի բարձունքն իբրև ամպեր մեր աչքին կ'երևէին։ Ի վերջ՝ այս ահագին լեռին ստորոտը հասանք։ Արծիւ ու անգղ միայն բլրակին տարին վրայ բոյն դրեր էին։ սար մ'որ սեպաձև, առատապար և ամայի էր։ Երևակայէ, Ատոմ, կո-նաձև բլրակ մը՝ ցցուած ժայռերու վրայ նստած, որ ոչ ուղղ ունի և ոչ անկիւն։ Այն բլրակին վրայ տեղ տեղ վայրի ծա-ռեր կային և ոչաձև ոստեր, որ լերկ ժայռին վրայ կ'սողոս-

կէին։ Զրի մանր առուներ անոր կողերէն կ'հոսին և արևուն շաւաւիղներէն գոյնզգոյն կ'փայլին։ Կենդանի մը, թռչուն մ'անգամ չտեսանք անոր վրայ, այլ միայն կանաչագոյն սողուններ մերթ ընդ մերթ կ'ասահէին չորաբեկ տունկերուն տորոտն կամ քարի ծեղերուն վրայ և իսկոյն կ'անհետէին։ Զէինք կարող տեսնել լեռին տորոտէն մարդու ձեռքը չինուած պատի մը, ամրոցի մը նշմարանքը։ Միթէ բոլոր լեռն բնակերտ բե՞ղդ մ'էր՝ անառիկ ու անմատչելի, միթէ անոր ուռուցիկ կողերն վառօդ ու մահ կ'պարունակէին, միթէ պայիկնե՞ր ու ուրուականնե՞ր էին անոր բերդակալները, կարելի չէր դուշակել։

«Այս լեռին կուշտին ներքև իրրև թղուկներ ապուշ կեցած կ'նայէինք և շաւիղ մը դտնելու կ'մտածէինք, երբ Ապրսամ նժոյգէն վար ցատկեց և ժայռի մը կատարին վաթթուելով սլոռաց։

«—Այս պիտի լինի մեր ապաւէնը, մեր աղատութեան տունը, և բոլոր երկնից շանթերը չպիտի կարենան շանթահարել զայն՝ եթէ միանգամայն անոր տարն ելնենք։ Այս տարին տիրողը կ'տիրէ Հայաստանի—։

«Եւ այս ըսելով՝ սկսաւ օձի պէս սողոսկել դէպ ի վեր՝ երբ յանկարծ՝ խոր ստորերկրեայ դղրդումմ'ելաւ, ապիտակ մուխ մը լեռին մէկ ճեղքէն դէպ ուղիղ ցատկեց և ապա ահագին որոտմամբ ռումբ մ'եկաւ և մեր զօրագունդին մէջ ընկաւ։ Երեք հայ զինուոր գետինը փռուեցան անշունչ, և իրենց զինակիցներն ողորմագին աղաղակ մը ճգելով սկսան ետ ետ քաշուիլ։ Նոյն միջոցին Ապրսամ իր սողունի արշաւանը կ'շարունակէր, խոտի, քարի կռուելով կ'մագլցէր դէպ ի վեր։ Տագնապալի ժամ մ'էր այն։ Ընկրկիլ վատութեան, լեռը հրացանի բռնել յիմարութեան գործ էր։ Փայլակ, մուխ, որոտում, ռումբ սկսան իրարու հետևիլ և ամեն անգամուն մերիններէն մէկ քանի հոգի ջնջել։ Կարծես թէ բոլոր լեռը հսկայ մարտկոց մ'էր որ ներսէն կ'եռար կ'դոռար և մեզ լափելու համար հրաշէկ ճակատ մը կ'ներկայէր։ Ճերմակ գօտի մը պատեց լեռնակին մէկ կողմն մահկաձև և Ապրսամն իր մէջ ամփոփեց։ Սուր աղաղակ մը փրթաւ հայ զինուորներու կուրծքէն, որոնք թէև ահաբեկ՝ անշարժ կ'ընդունէին կրակն և իրենց աչքը Զօրային վրայ յառած՝ անոր հրամանին կ'սպասէին։

Մակայն Զօրային աչքերէն կայծակներ կ'ցայտէին, դայրագին կ'դիտէր ամբոխին ժայռն որուն առջև իր առագաստ ու քաջասիրտ դինուորներն նկուն, դինաթափ կ'մնային, մինչդեռ Ապրսամ ամբոխին մէջ անհետ եղեր էր։

Զօրայ գայրոյթէն կ'հեւար. Նուրէմ իր մօտն էր։ Դարձաւ մեր կողմն ու ըսաւ.

«—Իւրաքանչիւր հրամանատար իր գունդն առնու և մնացեալ լեռը շրջապատէ, ժայռերուն ներքև ծռելով։ Հրացանները վար, մերն վ Ապրսամ, որ առաջ թնդանօթ կ'ամէ—։

«Իսկոյն այս հրամանը կատարեցինք։ Նոյն միջոցին լեռին բոլորտիքը հրաշունչ վառարան մը դարձաւ։ Անոր շրջանակէն ռումբեր կ'սեղմին մեր շուրջն, բայց չէին կարող մեզ դպչիլ։ Ապրսամի նժոյգն՝ սաղատ և անդրուագ՝ կ'արշաւէ սանձարձակ իր տէրը գտնելու և լեռն 'ի վեր ելնելու համար ուղի մը կ'փնտռէ։ Նուրէմ կայծակի պէս անոր ետևէն կ'սրանայ, իրը կ'թռչու և անոր վրայ կ'ցատկէ։ Նժոյգ և Նուրէմ անհրապոյթ կ'լինին։ Պահ մ'ետք՝ Նուրէմի նուրբ հասակն լեռին մէկ ելևէջին վրայ ստուերի պէս կ'երևի և նորէն անհետ կը լինի։ Ապրսամի նժոյգը բնազդով անցք մը գտեր էր...։

«Բայց ո՞ւր էր ինքն Ապրսամ. արդեօք թնդանօթին բերանը գացեր էր։ Մեր մտատանջութիւնը կ'աւելնար. վտանգաւոր էր մեր դիրքը։ Պէտք էր անվրէպ առնուլ Բաղաբերդը որ կարծես թէ իր ահարկու կոյտին և կրակին ներքև մեզ պիտի ճղմէր ու այրէր։ Զօրայ հարիւր դինուոր յանձնեց Գուրգամին որ լեռնաբերդին շրջակայքը քննելու երթան։ Նոյն միջոցին կրակը դադրեր և լեռը պատող ամպը ցրուեր էր։ Յանկարծ ձայն մը բրդաւ լեռին խորքէն. արձագանքն որոշակի կրկնեց նոյն ձայնը.

«—Վ՛եր Սասունցի քաջերը—։

«Իսկոյն լեռին ստորոտէն հեռացանք ու բացն ելանք։ Մեր աչքին ներկայացան Ապրսամ ու Նուրէմ դոդաւոր ապառաժի մը մէջ պատսպարուած, երկու քարէ արձաններու պէս։ Նորէն արձագանքը կրկնեց.

«—Վ՛եր Սասունցի քաջերը—։

«Այս կոչումին վրայ շարժեցան Սասունցիք և դէպ 'ի Բաղաքի—քարը վազելով նապաստակի պէս մագլցիլ սկսան։ Բայց շատերը վար գլորեցան, այնքան ցից էր լեռն որ մէկ մասը

միայն յաջողեցաւ մայրաքաղաքաւ և ժայռի կատարներու կռուելով դէպ ի վեր ելնել։ Լեռն նորէն կ'դղրդի, կրակի կ'բռնէ մեզ և մուխը մեր աչքէ կ'ծածկէ բերդն, որու վրայ պարսիկ դինուոր մ'անդամ չէր երևեր։

«Նոյն միջոցին Գուրգամիրենեներով կ'վերադառնայ և կ'յայտնէ թէ Բաղարերդի արևելեան դին՝ քառորդ մը հեռի, ընդարձակ փոսաձև ուղի մը կայ որ՝ իր կարծեօք՝ բերդին հետհաղորդակցութիւն պիտի ունենար, թէ նոյն փոսի մօտ պարսիկ պահապաններ կ'դիզերին և չեն թողուր որ մարդ մօտենայ և թէ Ապրսամի ու Նուրէմին բռնած ճամբան ժայռուտ նեղ շաւիղ մ'է ունկիս միայն Ապրսամի ու Նուրէմի պէս քաջեր կրնան ելնել, այլ ոչ զօրաց դունդ մը ու ձիեր։ Զօրայ խկոյն հրամայեց որ այն փոսը գրաւեն, պահապանները սպաննեն և բերդին շուրջը գիծ մը քաշեն։ և մինչդեռ իր հրամանը կ'կատարուէր՝ լեռին մէկ կողին վրայ սոսկալի դղրդիւն մը կ'ելնէ, անոր կատարն սև սև գլուխներ առաջին անդամ կ'երևին։ Պարսիկները բերդէն դուրս կ'ելնէին հրացանով, վասն զի Ապրսամ անոնց թնդանօթները կ'գամէր, և հետզհետէ որոտումը կ'դադրէր։ Անհամբեր կ'դիտէինք վարէն այս տիտանեան գործն և չանթին դէմ պայքարը։ Թնդանօթի գոռումին հրացանի չոր ու կտրուկ պայթում յաջորդեր էր, որ պարսիկ դինուորներուն գոռ ու գոչումին կ'միանար։ Սակայն մեր քաջերը քիչ քիչ վեր կ'ելնէին և մերթ ընդ մերթ դնդակահար սառնոյն դինուորներու դիակներ վերէն վար թափելով կը կ'գլորէին։ Լեռին մէկ ցից ապառաժին վրայ ահարկու մարդ մը կ'երևէր։ վառօդէն ու մուխէն դէմքը սևցեր էր։ իր պղնձէ պզտիկ սաղաւարտը արևուն կ'փայլեր և ինքն դնդակներուն տակ կ'ծիծաղէր։ Ցանկարծ այս հսկայն կ'երերի, կռուին բերդին ուղղելով անէծք կ'պոռայ և ժայռին վրայ կ'կործանի կ'կոնայ։ Այս հսկայն էր Ապրսամ։

ՀԱՆԴԷՍ

ԲԱՑՄԱՆ ՆՈՐԱՇԷՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԶՄԻՒՈՒՆԻՈՑ

Ինչպէս առաջուց ծանուցուած էր, ամսոյս 14ին կատարուեցաւ նորաշէն հիւանդանոցի բացման հանդէսը։ Գեր. Ս. Առաջնորդ Տ. Մելքիսեդեկ Ծ. Վարդապետն Ս. Պատարագ մատուցանելէն ետք՝ Ս. Լուսաւորչի տաճարը, եկեղեցական շքեղ հանդիսով հիւանդանոցը մտաւ և վերնայարկի դահլիճն ելաւ, որ պատրաստուած էր վայելուչ փառաւորութեամբ։ Ժողովրդեան խուռն բազմութիւնն լցուած էր վերին ու ստորին մեծ սրահները։ Գեր. Առաջնորդին և եկեղեցական դասուն յատկապէս բարձրաւանդակ պատրաստուած էր, որու առջև յատուկ տեղ մը բռնած էին ազգային վարչութեան և հիւանդանոցի հոգաբարձութեան անդամները, նշանաւոր ազգայնոց հետ։ Դահլիճի միւս ծայրը կ'գտնուէր երաժշտական խումբն։ Երբ հանդիսականները խմբուեցան և լռութիւնը տիրեց Սպարթալեան Վսեմաշուք Յաւկոր էֆէնտին իր և հարազատ եղբօր կողմէ խօսելիք խօսքը ուղղուած յանձնեց Գեր. Մակար Ծ. Վարդապետին և խնդրեց որ վոխանորդաբար կարդայ բոլոր հանդիսականաց։ Աւտիկ ոյն ճառին օրինակն.

Պատուական Հայ ժողովուրդ,

Այս շքեղ հանդիսա նպատակը նուիրական է։ Մեծ սարտուտրութիւն մը ունիմ կատարելու իմ և սիրելի եղբօրս Յովհաննու կողմէ, որ Եւրոպա գտնուելուն իր ղղայմանցը թարգմանն եմ, բոլոր Զմիւռնեայ Հայ ժողովրդեան և Զեզմով բոլոր Հայ ազգին առջև, ոյն նոր կատարեալ հաստատութեան մէջ, որ գումարուած կը տեսնեմ խնդութեամբ ազգայնոց ընտիր բազմութիւն մը։ Մեր կենաց ամենէրջանիկ օրերէն մէկն է այս օրս. վասն զի կը տեսնենք պսակուած խորհուրդ մը որ ի վաղուց մեր սրտին ու մտքին

մէջ ծագեր էր և որ Ամենակարողին Աստուծոյ օգնութեան և հոգեշահ ձայնի մը ներգործութեան կարօտ էր որպէս զի մարմին առնու։

Աստուած մեր ուխտն ու խնդրը լսեց, հնչեց ու ներշնչեց այդ ձայնն մեր հոգւոյն մէջ և այս նորաշէն ազգային շէնքն, տառապեալ մարդկութեան այս կայանը՝ կանգնեցաւ։ Փառք կու տանք Աստուծոյ որ իր նախախնամութիւնն ընտրեց զմեզ երկոքին հարազատ եղբարքս այս վերաշինութեան։

Ազգին ներկայ վիճակին վերահասու՝ վշտակիր կը դիտէինք իր բազմատեսակ պիտոյքն և մեր կարողութեան չափովն այս պիտոյից մին լեցընելու հոգը մեր տիրական փափաքը դարձաւ։ Այս մեր փափաքը որչափ զօրանար նոյնչափ Աստուծոյ յաջողութեամբ կ'ամէին՝ մեր ակնկալութենէ աւելի, մեր նիւթական կարողութեան միջոցներն, և մինչդեռ մեր ունեցածէն բաժին մը Ազգիս շնորհելու խորհուրդը կը տածէինք՝ մեր Գեր. Առաջնորդ Ս. Հօր Տ. Մելքիսեդեկ Ծ. վարդապետի Մուրատեանց հոգեշահ և հայրենասիրական քարոզներն եկան և աւելի ևս բորբոքեցին մեր սիրտն և մեր սիրելի Ազգին մշտնջենական ծառայութիւն մ'ընելու տենչը։

Արդարև՝ մեր եկեղեցին, մեր վարժարաններն ու հիւանդանոցը կարօտ էին սատարութեան, բայց գլխաւորապէս ազգային հին ու խարխուլ Հիւանդանոցի շէնքն, անոր մէջ պատսպարեալ խղճալեաց վիճակն, թշուառութեան հեծեծանքն մեր աչքին ներկայացան, մեր սիրտը շարժեցին, և երկու հարազատքս որոշեցինք ի հիմանց նորոգ կառուցանել ազգային շէնք մը որ ոչ ներքին բարեկարգ կազմաւորութեան, ոչ կանոնաւոր մատակարարութեան, և ոչ ողջապահութեան էական պայմաններն ունէր։

Այս մեր որոշումն ազգային Վարչութեան հաղորդելով՝ իր յոժարակամութիւնը ստացանք և գործի սկսանք։ Շենք ուզեր երկարօրէն բացատրել թէ ինչ դժուարութիւններ կը համակէին մեր սիրտն քանի կը յուսաջանար այս ձեռնարկութիւնը, քանի կը մտածէինք որ Աստուծոյ և մարդկութեան հաճելի եղող գործի մը պատարները լինելու բարեբաղդութիւնն ունէինք։ Եւ արդարև կան գործեր որ աւելի ևս կը զրաւեն ու կը հրապուրեն մարդկային միտքն ու հոգին քան թէ փառասիրական յաղթանակներ և վաղանցուկ յաջողութիւններ, և այս կարգէն է թշուառ մարդկութեան վիշտերն ըստ կարի սփոփելու գործը և ասկից ծագած մխիթարութիւնը։

Եւ ահա այսօր կը տեսնենք կանոնն սոյն նորաշէն Ս. ԼՈՒՍԱ-ԻՈՐՁԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆ, որոյ կառուցման առթիւ վերանորոգեցաւ նաև յանուն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի հնակառոյց տաճարն՝ շինուելով նաև տնոր կից նոր պատհարան և սեղան, որ տարւոյս առաջին օրն յանուն սրբոյ Որդւոցն Զերեղեայ Յակոբայ և Յովհաննու տեառնապրութեամբ օծուեցաւ Գեր. Ս. առաջնորդ Հօր մեռօր, և նուիրեցաւ 'ի փառս ճշմարտին Աստուծոյ, մշանջենաւոր յիշատակ երկուց հարազատ եղբարցս անուան Յակոբայ և Յովհաննու։

Ազնիւ ժողովուրդ Հայոց, մեր ուխտն ու փափաքը կատարեցաք՝ կատարեցինք ազգային պարտաւորութիւն մը, և փոխարէն վարձատրութիւն պիտի լինին մեզի մարդասիրական գործիքը պատճառած ներքին զոհունակութեան զգայումն և սոյն ազգային շէնքին մէջ պատապարուելիք ազգին անկարող և անտէրունչ հիւանդաց ողջոյն ու օրհնեանքը։ Ուստի կը մնայ մեզ՝ ազգին հին հիւանդանոցը հիմնովին նորոգուած ազգին դարձընել՝ մեր յատուկ շնորհակալիքը յայտնելով մեր Գեր. Ս. Հօր և Ս. Հարց, նոյնպէս բոլոր ազգային Պաշտօնէից և համայն Ազգայնոց որ իրենց քաջալերական ու համակիր զգայումներով դիւրացուցին մեզի այս հիմնարկութեան շինութիւնը. և մանաւանդ ազգային Վարչութեան, որ Հիւանդանոցի նոր Հոգաբարձութիւն և Գեր. Հայր Ղեւոնդ Փիրղալէմեանն վերատեսուչ հաստատելով՝ իրրև պարտաւորիչ կանոն դրաւ մեր ազգատոհմէն միշտ երկերկու հոգի իբրև անդամակից ընդունիլ ամէն հոգաբարձութեան ընտրութեան ժամանակ։ Այս որոշումն իրրև ազգային վստահութեան և երախտագիտութեան նշան ընդունելով՝ յատկապէս կը յայտնենք որ այս մեր կոտակն զլխովին զործադրած պիտի լինին ազգն ու ազգային Վարչութիւններն եթէ միշտ սոյն հաստատութեան ներքին բարեկարգութեան և բարւոք մատակարարութեան ջանալիր գտնուին. և ներուի մեզ յատկապէս աղաչել Հոգաբարձութիւնն որ նոյնպէս իր ուշադրութիւնը դարձընէ թագուն խորշերու մէջ գտնուող ազգ. տնանկ ընտանիքներու, անոնց հիւանդաց ճրի բժիշկ, դեղ և կարեւոր պիտոյք յուզարկելով, որպէս զի այս պիսի թշուառներն իսկ անմխիթար չմնան։ Ազգն այս ամէն բարիքը կը վայելէ ընդ հովանաւորութեամբ Օսմանեան Պետութեան, որու Վեհապետն Սուլթան Համիտ՝ միշտ մարդասիրական զգայումներով լի՝ իր բոլոր հպատակաց ազգային հիմնարկութիւններն

ու արտօնութիւնները պահպանելով՝ մեր առջև ազատ ասպարէզ կը բանայ մեր եկեղեցիներն, մեր վարժարաններն ու հիւանդանոցը զարգացնելու, ինչպէս նաև իր արժանաւոր ներկայացուցիչն, դաւառիս Վսեմափայլ Համոի փաշան՝ որու արդարակորով կառավարութեան ժամանակ այս հիմնարկութիւնն յաջողութեամբ կանգնեցաւ։

Ա.րդ՝ սուրբ Հարք ու Քահանայք, Ազգ. ժողովք ու Խորհուրդք և Հոգաբարձութիւն և համայն ժողովուրդ, այս հանդիսական ժամուս, նորաշէն հիւանդանոցի նաւակատեաց առթիւ կը յայտարարեմ որ ձեզի պէս հանդիսական հայ մ'եմ այս տեղ, ազգային անհատ մը, որ լոկ պարտաւորութիւն մը կատարած եղաւ իր հարազատ եղբօր հետ սոյն շէնքը բարձրացընելով, որ Աստուծոյ պարգևն է, և զոր կը նուիրենք սրտի խնդութեամբ սիրելի ազգիս Հայոց՝ ի փառս ամենամեծ տնուան Աստուծոյ և՝ ի յիշատակ յաւիտենական։

Ուստի, Գերապատիւ Ս. Հայր, առէք, կ'աւանդենք ձեզի սոյն նորաշէն հաստատութեան բանալիներն և Ձեզմով հաւօրէն Ազգիս, և ուրիշ փառասիրութիւն մը չունինք՝ այլ միայն տեսնել հեռուէն սոյն հաստատութեան պայծառութիւնն ու հրճուիլ, լսել բուժեալ տառապելոց օրհնեանքն ու մխիթարուիլ, տեսնելազգային տան ուրիշ կարևոր պիտոյքը հոգալու հետամուտ բարերարներ և զԱստուած փառաբանել։

Այս է մեր իղձը, մեր ուխտն ու կտակը, որու գործադրութիւնը կը յանձնենք ամենայն վստահութեամբ մեր Սիրելի Ազգին և անոր յառաջադիմութեան միշտ բարեմաղթու կը մնանք։

ԵՂԲԱՐՔ ՅԱԿՈԲ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՊԱՐԹԱԼԵԱՆ

Զմիւռնիա, 14 Յունվար 1879։

Այս ճառն աւարտելէն ետև՝ Վսեմաշուք Յակոբ Էֆէնտին նորաշէն հիւանդանոցի բանալիներն յանձնեց Գեր. Առաջնորդին կրկնելով այս խօսքերն. — Ահա սոյն բանալիներուն հետ նորաշէն հիւանդանոցն ևս կ'յանձնեմ և Ձեր միջոցաւ կ'նուիրեմ Ազգին։»

Սոյն սրտաշարժ վայրկենին հանդիսականները միաբերան սկսան աղաղակել. «Կեցցեն Սպարթալեանք, կեցցեն Սպարթալեանք», այնպէս որ անհնարին է նկարագրել բաղմութեան խանդն ու յուզումն, ցնծութիւնն

ու զգացմունքը։ Նոյն միջոցին գահլիճին կամարաձև դրան վրայ երևցաւ կարմիր կերպասի վրայ գրուած այս արձանագիրն ոսկեայ տառերով.

ՀԱՄԱՅՆ ԱՍՊ ԵՐԱԽՏԱԳԻՏ

Կեցցէներու աղաղակներէն ետք՝ երաժշտական խումբն սկսաւ նուագել յանուն Սպարթալեան հաւաքատաց յատուկ երգը, զոր յօրիներ էր Ս. Պալասանեան պատուելին և երգանակաւորեր էր ճայնաւորութեան դասատու Մեծ. Վ. Փափազեան։ Աւարտիկ երգը.

Անեղին բան արարչագործ հնչէր հզօր յանհունս անծիր,
Հնչէր, և լոյսն տարբանայր, վերածդէին երկինք երկիր,
Ծով ծիրանի ծաւալանայր, վառէր կամարն երթերակալ,
Գլուէր և դունեն եօթնագունեան, սահէր մանիին արծաթ ափայլ։

Եւ հինաւուրց Որէն Աստուած
Ժպտէր անոյշ ընդ իւր հաստատուած,
«Այս՝ իմ հանգիստս» բանն կրկնէր,
Առեալ յաջում ըստ թեղեր։

Լուսափետուր իջեալ հրեշտակ առ Սպարթալեան Եղբարս կրկին,
Նկար չքնաղ տրպաւորէր երկամոլեցն 'ի միտս ուշիմ։
Վեհքն Յակոբ և Յովհաննէս անմահութեան ժառանգաւորք,
Գեղամբարիտ մերձեալ 'ի սուրբ սեղան Երկնից հրաշանորոգ։

Զօն սրտագին երկնահաճոյ
Նուիրէին Տեառն Աստուծոյ։
Եւ 'ի բուրումն անչահուտ
Խնկէր ժպտէր Լոյսն անապատ։

Եւ նոր հիմունք յալս անդնդոց իջեալ նստեալ հաստատեղոյս,
Միւնք կանգնէին միմեանց վերայ, չէն բարձրանայր երկին 'ի կոյս։
Տաճար չքեղ եկն յերևան, ուր աննիպան Աստուածորդի
Յանձն հիւանդաց, տառապելոց պաշտի 'ի սէրս մարդկային։

Եւ Սպարթալեան անմահ Եղբարք,
Նուիրեն Տեառն զայս չքեղ յարկ։
Կեցցէ՛ յամայր Տուն Նոցա պերճ,
Զոր Աղգ Հայկեան օրհնէ յաւերժ։

Այնուհետև Դեր. Առաջնորդն հանդէսին վերամբերեալ յուզուած ատենախօսութիւն մ'ըրաւ, որու համառօտութիւնն է այս.

«Սիրելի Հանդիսականք

«Կան արտասուքներ, որոնք արտմութենէ յառաջ կը դան, և կան արտասուքներ, որոնք ուրախութենէ։ Տրտմութեան արտասուքները խիստ յաճախ են մարդկութեան մէջ, իսկ ուրախականներն խիստ սակաւ։ Աղքատութիւն, սով, դերութիւն, տառապանք, հրդեհ, սնանկութիւն, կոտորած, մահ և այլ ամեն աղէտներ արտմական արտասուաց առիթներ են։ իսկ ճոխութիւն, յանկարծական բերմունք բարեկեցութեան, աղատութիւն 'ի դերութենէ, կառուցումն հասարակային շինուածոց՝ եկեղեցեաց, վարժարանաց, հիւանդանոցաց և այլ ամեն բարեբաստիկ յաջողուածք առիթներ են ուրախական արտասուաց՝ այն անձանց համար, որոնք ամեն բարիք 'ի վերուստ կը հաւատան ընդունիլ։ Կամիմ ասել, ուրախական արտասուքներն յառաջ կը դան շնորհակալութեան բուռն զգացումէ, երախտագիտական սաստիկ յուզմունքէ և սիրոյ անպատում դեղմունքէ։

«Ձիշդ սոյն ուրախական արտասուաց ժամերէն միոյն մէջ կը գտնուինք մենք այժմ, Սիրելի Հանդիսականք։ Մեր սիրտերը կը բաբախեն, մեր հոգիները կը թռթռան և մեր աչքերը կը տամկանան արտասուաց քաղցր ցողով. քանզի եթէ դառն է տրտմական արտասուք քաղցր է ուրախականն։

«Այս պահուս Սպարթալեան Վսեմաշուք Յակոբ էֆէնտին, որ իւր հարազատն ևս կը ներկայացնէ, բանալիները կը նուիրէ մեզ (Գեր. Առաջնորդն բանալիները բարձրացնելով կը ցուցնէ ժողովրդեան) և մի կողմն քաշուելով կ'ըսէ՝ «Այսուհետև անհատ մ'եմ ես, Հայ մ'եմ միայն»։ Շատ սրտաշարժ են այս խոսքերն, Սիրելիք, և մեծ մտախոհութեան արժանի. քանզի միայն սոյն բանալիները չեն, զորս կը նուիրեն Սպարթալեանք, այլ նորաշէն ու հոյակապ հիւանդանոց մի, իւր ամեն պատրաստութեամբ, նորոգեալ եկեղեցի մի, նորաշէն պահարաններով, գաւթով ու զանգակատունով, յատուկ սենեակներ քահանայից և հիւրերու համար, խորհրդարան և սենեակներ հոգաբարձութեան և մտամաճառաց համար, դեղարան իր վայելուչ պատրաստութեամբ, սիրուն պարտէզներ իրենց ծառաստաններով, ծաղկոցներով և շատրուաններով։ Այս ա-

մենն նուիրելով կը խնդայ և կ'արտասուէ ահա Վսեմ. Յակոբ Էֆէնտին, անչուշտ գոհանալով Աստուծմէ, որ օգնած է երկու հարազատներուն այսպիսի մեծ ծառայութիւն մատուցանելու ազգին, և ո՞վ կարող է դիմանալ և չարտասուել այս սրտագրաւ վայրկենիս (Դեր. Առաջնորդն նոյն միջոցին արտասուք կ'թափէ, շատ սրտաշարժ խօսքեր արտասանելով իր սրտի խորքէն և հանդիսականներէն շատերը ցնծութեան արտասուքներ կ'ցօղեն իրենց հետ) ո՞վ կարող է չը վրձկիլ երբ կը տեսնէ թէ՝ Սպարթալեան Եղբարք սոյն հոյակերտ հիւանդանոցը նուիրելէն զինի, քրիստոնէական խոնարհութեամբ ամենայն ինչ Աստուծոյ կը վերագրեն, իրենց անձն լոկ Նախախնամութեան գործիք կը համարեն և իբր թէ բան մը ըրած չեն, այնպէս կը ներկայանան սոյն փառաշուք հանդիսին մէջ։

«Չեմ կարող բացատրել Ձեզ, Սիրելիք, թէ որչափ վսեմ է այս հոգեկան դրութիւնն, այն զմայլման սեսարանն, երբ մարդ իւր անհատական, ընկերական և ազգային պարտաւորութիւնը կատարելէն ետք՝ չը մեծամտեր, այլ կը հեզանայ, չը խրոխտար՝ այլ փառք կու տայ Նախախնամութեան, և իւր մեծագործութեան մէջ իւր անձն ու հարստութիւնը չը տեսներ, այլ իւր պարտուց կատարման ուրախութիւնն։

«Զարմանալին այս է, որ Սպարթալեան Եղբարք, իրենց ճառին մէջ իրենց գործոց համար Աստուծոյ մատն խոստովանելով հանդերձ, հրապարակաւ կը յայտարարեն նաև, թէ ես և՝ իբրև Առաջնորդ, իմ քարոզներով շարժաւիթ եղած եմ իրենց սոյն մեծագործութեան։ Այս հանդիսաւոր պահուս մէջ Սիրելիք, այս խուռն բազմութեան առջև կը ստիպուիմ հոգւոյս բոլոր վկայութեամբ ասել թէ՝ եթէ իմ քարոզներէս որ և իցէ ազդեցութիւն, որևիցէ ներշնչութիւն կամ տպաւորութիւն եղած է Սպարթալեան Եղբարց այսպիսի ազգասիրական և բարեպաշտական մեծ գործի ձեռնարկելու, այդ ազդեցութիւնը բնաւ երբէք իմ անձնական արժանաւորութենէ չէ, քան զի ես զիս կը ճանաչեմ, այլ աստուածային Նախախնամութեան անհուն և անհաս տնօրէնութենէ, որ շատ անգամ տկար գործիքներ ձեռք կ'առնու մեծամեծ գործքեր կատարելու համար, հովիւներ կը մարգարէացնէ և ձկնորսներու ձեռքով աշխարհ կը վերանորոգէ։

«Սպարթալեան Եղբարց ազգասիրական գործն իրենց քրիս-

տոնական երկիւղածութեան և բարեպաշտութեան արդիւնքն է, քանզի երկիւղած սրտերն են, որ կը նուիրեն, և քրիստոնէական ոգին է, որ մարդս եսականութենէ կը հանէ ու մարդասէր ու ժողովրդասէր կ'ընէ։ Օգնել, բարերարել, յիշատակ թողուլ, անմահութեան հաւատալ, ընկերին, Ազգին նուիրել և ստուածային վարձուց ակնկալել, այս ամենն քրիստոնէական ոգւոյ յատկութիւններ են. քանզի եսականութիւնն կամ անձնասիրութիւնն զրկել, ատել և քամահրել գիտէ. քրիստոնէութիւնն է միայն որ կը սիրէ, կ'օգնէ, կը նուիրէ, կը զոհէ։

«Սպարթալեան Եղբարք սոյն հոյակապ շէնքէն առաջ իրենց սիրտն նուիրած են Ազգին և շէնքին համար եղած զոհողութիւններն սրտի ներքին նուիրման արտաքին արդիւնքներն են։ Ուրեմն նոքա շէնքէն աւելի մեծ բան նուիրած են, նոքա բանալիներն տալով կարող չեն հեռանալ, քանզի իրենց սիրտն կապուած է Ազգին հետ. նոքա զԱզգն կը կրեն իրենց սրտին վրայ և Ազգն կը կրէ և պիտի կրէ նոցա անունն ու յիշատակն դարուց 'ի դարս իւր սերունդին սրտին վերայ։ Բարերարութիւն ու երախտագիտութիւն անբաժան պիտի մնան. նուէր և գոհութիւն պիտի չանջատուին իրարմէ։ Պատմութիւնն պիտի արձանագրէ բարերարաց անունց ու գործոց հետ՝ նաև բարերարելոց երախտագիտական հանգիսի փառաւոր յիշատակն։

«Ի՞նչ պատմական ճշմարտութիւններ կ'արթննան յիշողութեան մէջ, դիտէ՞ք, Սիրելիք, ինչքան ցնծութի՛ւն կ'զգամ բարձրաձայն դոչելու՝ «Հայ Ազգն չմեռնիր, քանի որ իւր մէջ մեծ բարերարներ ունի. Հայ Ազգն չմեռնիր, քանի որ հայրենասէրներ ունի։ Քանզի Բարերարներն Ազգի նեցուկներն են, Հայրենասէրներն՝ Ազգի շունչն ու կենդանութիւնն են և այն Ազգն չմեռնիր բնաւ սրոյ ծոցն ցամքած չէ հայրենասէրներ ծնանելու համար։

«Նա որ իւր ինչքն կը նուիրէ՝ իւր սիրտն կը նուիրէ. իսկ նա որ իւր սիրտն կը նուիրէ, իւր անդանդն կը նուիրէ, իւր միտքն կը նուիրէ, պատրաստ է նաև իւր անձն նուիրելու, և ի՞նչ է հայրենասիրութիւնն, եթէ ոչ բովանդակ անձնուիրութիւն իւր Ազգի փառաց և բարեբաստութեան համար։

«Դուք, Սպարթալեան հարազատներ, դիտէ՞ք արդեօք թէ ո՞րչափ ուրախացուցիք մեր Հասարակութիւնն, մեր ժողովներն, մեր ժողովուրդն, մեր Ազգն։ Դուք ոչ միայն բարերա-

թիւն մ'ըրիք, նուէր մ'ըրիք, այլ նաև Ձեր կենդանի ծ-
րինակաւ քաջալերմ մը, յոյս մը տուիք մեզ, թէ մեր մեծա-
գործ Նախնեաց ոգիներուն տակաւին կըշարունակի մեր մէջ, մեր
Ազգն գագրած չէ տակաւին հայրենասէր ու ազգասէր զաւակ-
ներ ծնանիլ:

«Դուք կը յանձնէք ինձ սոյն բանալիներն իբրև ժողովրդեան
ներկայացուցչի և ես կը յանձնեմ ժողովրդեան, և 'ի դիմաց
բոլոր ժողովականաց, խորհրդականաց և հոգաբարձուաց, բո-
լոր հանդիսականաց և ժողովրդոց մեծ ու փոքրունց, կը շնոր-
հաւորեմ Ձեր ժողովրդասիրական սխրագործութիւնն, Ձեր
քաջութիւնն, Ձեր առաքինութիւնն: Կը տեսնեմ ակներև հան-
դիսականաց երախտագիտական յուզումն և վստահութիւն
կ'առնում նուիրել Ձեզ, Ազնիւ Հարազատներ, նոցա շնորհա-
կալու զգացումներն, նոցա սրտերն բովանդակ, և այս սրտերն
համաբերեցէք դուք իբրև կենդանի ու խօսուն արձաններ Ձեր
բարերարութեան և հայրենասիրական յիշատակն անեղծ պա-
հելու և սերունդէ 'ի սերունդ տանելու համար:

«Շնորհակալ ենք Ձեզմէն, Ազնիւ Հարազատներ, ազնիւ հա-
յութեան Ազնիւ Զաւակներ: Ապրիք դուք երկար տարիներ,
ապրին Ձեր զաւակներն ու սերունդներն դարուց 'ի դարս 'ի
պարծանս Ազգիս:

«Շնորհակալ ենք նաև Ձեր հօրեղբօրորդի Մեծ. Կարապետ
Սպարթալեանէն, որ Ձեր սիրելին ու հաւատարիմն է. ինչպէս
Դուք կը ճանաչէք նորա տաղանդն ու գործունէութիւնն, մենք
ևս գիտեմք թէ Ձեր հովանաւորութեան տակ որչափ աշխա-
տեցաւ և քրտնեցաւ սոյն Հիւանդանոցի շինութեան համար:
Աստուած օրհնէ զինքն և իւր զաւակները:

«Փառք տանք Աստուծոյ, Սիրելի Հանդիսականք, որ այսպի-
սի աւուր արժանացուց մեզ, և աղերսենք ու հայցենք իրմէն
որ շատցնէ, բազմացնէ Սպարթալեան հարազատաց նման հայ
զաւակներ, որոնք Ազգին նուիրեն իրենց սիրտն, իրենց հո-
գին, իրենց դոյքն, տաղանդն ու միտքն Ազգի վերաշինութեան
ու վերակենդանութեան համար:

«Աղօթենք նաև, որ Աստուած երկար կեանք տայ Օգոստա-
փառ Սուլթանին և իւր կառավարութեան կար և զօրութիւն
իւր երկիրն բարեկարգելու և իւր ժողովուրդն բարեբաստիկ
կացուցանելու, որու մասն կը կազմէ նաև մեր Հայ ազգն բա-

ական դարերէ 'ի վեր և որ Օսմանեան սիրութեան հովանւոյն տակ անկորուստ պահած է իւր Նախնիքներէ մնացած երկու թանկագին աւանդներն՝ իւր լեզուն և իւր կրօնն և միշտ ազատութիւն ունեցած է ազգային հաստատութիւններ կառուցանելու, ինչպէս են Եկեղեցիք, Վարժարանք, Աղքատանոցք և Հիւանդանոցք, որու մի յայտնի ապացոյցն է նաև ոյն հոյակապ շէնքն, որու բացման նաւակատիքն այսօր կը տօնենք: Աղօթենք նաև գաւառիս կուսակալ Համիտի փաշայի բարեկեցութեան համար, որ կը սիրէ Հայ Ազգն և կը փափաքի անոր յառաջադիմութեան:

«Հուսկ յետոյ, Սիրելի Հանդիսականք, պարտք մի ևս ունինք կատարելու, զայն ևս յայտնեմ Ձեզ և աւարտեմ խօսքս:

«Սոյն հոյակապ հիւանդանոցն ունինք մենք այսօր, բայց ապագային մէջ պայծառ ու վայելուչ պահպանելու համար պարտինք մեծ ուշադրութիւն դարձնել: Սպարթալեանք շէնքը նուիրեցին, բայց մատակարարութիւնն Ազգին կը պատկանի: Սոյն օրէն աւելի նշանաւոր օր չը լինիր, այս անմոռանալի օրն պատկենք մեր նուէրներով: Արձանագրենք այս Տուփարին մէջ (Գեր. Առաջնորդն ժապաւէնաշարդ մատեան մը կ'բարձրացնէ 'ի տես ժողովրդեան) մեր անուններն ու նուէրներն և գեղեցիկ յիշատակ մը թողունք սոյն հանդիսին նկատմամբ, թէ մենք միայն ուրախացած չենք սերկեան օրս, այլ և մեր ուրախութիւնն արդիւնաւորած և արբաղործած ենք մեր նուէրներով»

Նորէն սկսան երգերն ու երաժշտական ձայները: Յետոյ եկեղեցական դասն սկսաւ երգել, «Այսօր երկնայինքն ուրախացան» խորհրդաւոր շարականն և հիւանդանոցի կեդրոնին մէջ անդաստան կատարեց, վասն համբրէն ազգին, վասն հիմնադրաց ազգային վարժարանաց և ամէն բարեգործական հաստատութեանց, վասն համբրէն բարերարաց ու սատարաց ազգիս: Այս արարողութենէ ետք՝ Արժ. Տ. Յակոբ քահանայ Պալապանեան արտասանեց եկեղեցական դասուն կողմէ հետևեալ ճառը.

Վսեմաշուք Տէր,

Քաջալերեալ է ինձ սոյն գեղեցիկ հանդիսիս առթիւ մի քանի խօսք

արտասանել Արժանապատիւ պաշտօնակցաց ներողամտութիւնն խնդրելով։

Այսօր քաղաքիս անձնուիրաբար աշխատող Ազգ. Ժողովներն, խորհուրդներն, Հոգաբարձութիւններն, իրենց բարեջան և արթուն Հովուին ու Նախագահին հետ ներկայացած են, այս նորակառոյց հոյակապ նուիրական սրբավայրիս բացման հանդէսն կատարել, վասնզի Զմիւռնիոյ քաղաքիս բոլոր Հայ հասարակութեան կողմէն, մեր սրտից մէջ զգացած խորին շնորհակալութիւնը և ջերմ երախտապարտութիւնն յայտնելով բարեմաղթել միանդամայն, Ամենակալ Արարչէն, Ձեր և Ձեր օրհնեալ առաքինասէր և ազնիւ դերդաստանին անդին կենաց երկարութեան, բարօրութեան և խաղաղութեան համար։

Վեհ հոգիք, մեծագործ Տեարք, կեղծիք չեն մեր խօսքերը, շողոքորթել չէ Ձեր վեհ բնաւորութիւնը, այլ ներքին համոզմանբ է, ինչ որ կ'ըսենք. հաւատացէք, Տէր, Ընդհանուր ազգայինքս ճանչցած ենք Ձեր մեծագործ և կարօտ ազգի մը առաջին կարգի բարերարներէն ըլլալը, առաջին կարգի, կ'ըսեմ, այո՛; վասն զի ոչ միայն այս դարուս մէջ, այլ մէկ քանի դարերու մէջ երևցողմեր ազգային բարերարաց պատմութիւնն եթէ աչքէ անցնենք, կը տեսնենք յիրաւի որ քիչ գտնուած են մեր ազգին մէջ այնպիսիներ որ այս աստիճան մեծագործութիւն մը ընելու կարող եղած ըլլան իրենց ազգին, և ինչ գործ, գործ մը որով Ամենակարող փառաւորեալ Աստուածը վերատին կը փառաւորուի, գործ մը՝ որով արդէն Աստուածիւր պատուիրանաց կատարումը տեսնելով՝ անշուշտ իւր խոստացած վարձատրութիւնը չպիտի զլանայ Ձեզ աւելի երջանկացնելու համար, գործ մը՝ որու համար Հոգին սուրբ Աստուած առատապէս միշտ պիտի հեղու իւր սուրբ շնորհքը Ձեր առաքինի և ազնիւ դերդաստանի վրայ, վերջապէս գործ մը կ'ըսեմ որու համար բազմերախտ սուրբ Հայրապետն մեր Գրիգոր Լուսաւորիչ անդադար պիտի բարեխօսէ առ Բարձրեալն Ձեր դերդաստանին երջանկութեան համար։

Ուրեմն միթէ մենք պիտի կրնա՞մք մեր սրտից զգացումը միայն լռութեամբ անցնելով շատանալ, քաւ լիցի, այն առեն միթէ չը՞պիտի բողոքէ մեր բազմերախտ սուրբ Հայրապետը ըսելով թէ՝ Ժողովուրդ, նախանձեցա՞ր արդեօք իմ անուամբս կառուցեալ սուրբ տաճարի նորոգմանը և անոր կից գտնուող

այն մեծաշէն շէնքին շինութեանը վրայ որքու սրտի երախտագիտութեան զգացումը լուութեամբ անցնիլ կ'ուզես, յորում պիտի պատասդարուին այնչափ տառապեալք, թշուառք և հիւանդք. ո՛հ, միթէ չը՞ պիտի բողոքեն, կ'ըսեմ, այն ժամանակ անոր մէջ պատապարուող այն բազմաթիւ յիմարք, կարօտեալք և զառամեալք. այո՛, միթէ չը՞ պիտի բողոքեն անոր մէջ առողջացեալ այն հիւանդները որ իրենց առողջութիւնը ստացած զայն կառուցանող բարեբարաց բիւր օրհնութիւններ տալով դուրս պիտի ելլեն, այո՛, այս ամենքն իրաւամբ պիտի բողոքեն եթէ մենք լուութեան տակ միայն պահենք մեր երախտագիտական զգացումը. բայց, քաւ լիցի, անկարելի է մեզ լուռ և մունջ անցնելով այս բողոքանաց տեղի տալ։ Օ՛ն ուրեմն, ո՛ պատկառելի, բարեջան, անձնուէր և արթուն Հովիւ, ինչպէս որ քու խոհեմ և ազգասէր բնաւորութեամբդ կը նախագահես ազգային բոլոր ժողովոց և Խորհրդոց ու Հոգաբարձութեանց, նախագահէ ասոր ևս մեր հետ սոյն սրտառանդ բարեմաղթութեանց ձայնակցելով, և պիտի դոչենք միաբերան Զմիւռնիոյ և անոր վիճակաց երախտաճանաչ բարեպաշտ հայ հասարակութեան կողմէն.

Կեցցեն յաւիտեան Վսեմաշուք Եղբարք Սպարթալեան բարերարք ազգին մերոյ։ Կեցցէ յաւիտեան բոլոր դերդաստանն Սպարթալեան զարմօք և զաւակօք։ Կեցցեն, ո՛ բարերար հոգիք, դորձք Ձեր աստուածահաճոյ, 'ի յիշատակ երախտապարտութեան ազգիս, կեցցեն այն Ձեր բարեպաշտ սիրտերը որ դիւեր ու ցորեկ կը խորհին մեր խեղճ ազգին բարիք ընելու. կեցցէ նաև Նախագահ հայրն մեր հանդերձ կղերականն դասուք և բոլոր ազգային պաշտօնէիք, Ձեզ նման բարեբարաց միշտ աղօթող ըլլալու համար, կեցցեն ազգ մեր և հայրենացիք որ իրենց սրտին մէջ երախտագիտական արձանները պիտի կանգնեն։

Եւ ապա 'ի դիմաց Ազգ. Վարչութեան Պ. Մ. Մամուրեան այսպէս ճառախօսեց.

Վսեմաշուք հարազատ Եղբարք
Յակոբ և Յովհաննէս Սպարթալեան,

Թիչ մ'առաջ մեր հոգևոր Հովիւն իր սրտառուչ և ճարտասան ձայնով բոլոր ժողովրդեան երախտագիտութեամբ զեղուն

սիրաը թափանցեց, յուզեց և Ձեր բարերարութեան ու մարդասիրութեան կենսատու և ազդաշէն արդիւնքն այնպէս ճըշմարիտ և կենդանի շեշտով բացատրեց որ չպիտի յանդգնէի այս բանն ելնել ու խօսիլ եթէ արդէն Ազգային Վարչութեան կողմէ հրաւէր ընդունած չլինէի* թարգման կանգնել իր յատուկ շնորհապարտ զգացմանց, որով արդէն Ձեր մարդասիրական առաջարկութիւնն ընդունած և անոր գործադրութեան մնադիւր ու խնդագին հաւանութիւն տուած էր, և որ միանդամայն իմ անհատական զգացմանցս կ'համապատասխանեն։

Քանի որ այս փառաւոր հանդէսը նպատակ ունի հոչակել Ձեր կանգնած և Հայոց ազգին շնորհած այն բարեպաշտական հիմնարկութիւնն, եթէ մենք լռենք սիրաները պիտի խօսին միշտ։

Եւ արդարև այս հանդէսը համեմատարար շատ անվայել ու անպատեհ կ'գտնեմ ամեն հայ սիրաներու մէջ բորբոքող երախտագիտութեան հանդիսին մօտ՝ որ չէ թէ միայն ժամ մը, օր մը, ամիս մը այլ տարիներ ու դարեր պիտի տևէ և սերունդէ սերունդ Ձեր մարդասէր հոգին անջինջ պիտի գրոշմէ պատմութեան մէջ։ Բայց միթէ կարելի՞ է ճշգրիտ նկարագրել ազգային այս ընդհանուր ցնծութիւնը, տառապելոց օրհնութեան ձայները և պատմութեան պայծառ վիճակն այս հոյակապ արձանին առջև՝ որու նմաններն երբեմն միայն վեհապետներ ու կայսրներ կ'կանգնէին հիւանդ, ապիկար, անոք ու անօգնական մարդկութիւնը պատսպարելու համար։

Ձեր խորհուրդը մեծ էր, Վսեմաշուք Տէրք, և ազգային

Զմիւռնիա, 15 յունվար 1879

*... Մ. Մամուրեան

Կը խնդրենք որ Սպարթալեան Վսեմաշուք Եղբարց առատասրտութեան և մարդասիրութեան շնորհիւ կառուցուած ազգային հոյակապ հիւանդանոցին բացման հանդիսին առթիւ՝ բարեհաճիք Քաղ. ժողովոյ շնորհակալութեան և երախտագիտութեան հաւատիքը հրապարակաւ յայտնելու։

Ցուսալով որ պիտի բարեհաճիք այս նուիրական պարտքը կատարելու ինչ կերպով որ ձեզի պիտի թելադրեն մեր տաղանդն ու ազդասիրութիւնը։ Մնամք ձ

Անդամք Ազգ. Քաղաքական Ժողովոյ

Մարտիրոս Գառանիկեան — Պօղոս Կ. Տիլաբերեան
Յակոբ Ս. Մերիկերեան — Մկրտիչ Եայեան
Գր. Չիլինկիրեան — Պօղոս Յ. Տիլաբերեան

Վարչութիւնն երջանիկ կ'համարի ինքզինքն որ իր սիրելի և ընտիր Նախագահին հոգեշունչ խօսքն անոր ոյժ ու բորբոք տալով՝ իր պաշտօնավարութեան ժամանակ՝ այդ մեծ խորհուրդը կ'իրանայ և մեր ու բոլոր Ազգին առջև այս հոյաշէն սուրբ Լուսաւորչի հիւանդանոցը կ'կանգնի։ Ձեզմով դիտութիւնն ու մարդասիրութիւնը կ'յաղթանակեն անզգայութեան ու անտարբերութեան վրայ, Ձեզմով կ'նորոգուին այն դարերն երբ մեր Ս. Հայրապետներն ու աստուածապաշտ թագաւորները, Մեսրոպներ ու Ներսէսներ, Տրդատներ ու Աշոտ Ողորմածներ Հայաստանի թշուառներուն համար հիւանդանոցներ ու վանտուններ կ'շինէին որ տեսակ մը հիւանդանոցներ էին։ Բարեպաշտ ու նահապետական նախնեաց առաքինութեան ժառանգորդք՝ դուք քրիստոնէութեան սկզբունքը չէ թէ խօսքով այլ արդեամբ կ'կատարէք, քանի որ քրիստոնէութեան ծագումէն ետք երևան ելան այն բազմութիւ հիւանդանոցներն ու պատսպարաններն որ զրեթէ անծանօթ էին հեթանոսութեան, երբ գերութիւնը կ'տիրէր ամեն տեղ և հիւանդ տարուկներ իրենց տեարց խնամքը կ'զարմանուէին որչափ ատեն որ վերստին գործածելի բանուորներ լինելու յոյսեր տային, ապա թէ ոչ իբրև անօգուտ գործիք ամայի վայրեր կ'արտաքսուէին կամ Էսկուլապոսի պահպանութեան, այսինքն ծանր մահուան մը կ'դատապարտուէին։ Բայց քրիստոնէութիւնն՝ որ հաւասարութիւն ու գթասիրութիւն կ'քարոզէ, չկրցաւ այդ սահմանին մէջ պահել մանաւանդ Արևմուտքի մէջ՝ իր պաշտօնեաներն որ՝ փառասիրութենէ մղեալ՝ բարեպաշտական հիմնարկութեանց կատկուած դումարներ՝ տարբեր նպատակներու յատկացուցին և ընկան այն հոսանքին մէջ՝ որ կ'քշէր ընկերութիւնները դէպ'ի անհամեմատ անհաւասարութիւն, տնիրաւութեան ու երկրակալութեան շնորհիւ, և տհաղին վիհ մը կ'բանար հարուստին ու աղքատին մէջ։ Մէկ կողմը կ'երևէին անսիրտ իշխաններ ու մեծատուններ, միւս կողմը աղքատներ ու թշուառներ։ մէկ կողմը ճոխութեան, պերճութեան ու շռայլութեան կուռքեր, միւս կողմն չքաւորութեան ու տնանկութեան ցնցոտիներ ու մահ։ Բայց ընկերութիւն մ'այսպիսի վիճակի մէջ միշտ կ'ստադնասպի, միշտ յուզմունքի ու յեղափոխութեան կ'ենթարկի։

Այն ատեն ծագեցան ընկերական ու տնտեսական ահարկու խնդիրներ զորս լուծելու համար դիտութիւնը, քրիստոնէական

մարդասիրութիւնն ու գթութիւնը իրենց յատուկ միջոցներն առաջարկեցին։ Տեսան որ կան թշուառութիւններ որ ընկերական օրինաց, մարդկային յոռի կրից, մոլութեան, անդորձութեան, անհեռատեսութեան հետևանք են, թէ կան նաև այնպիսի աղէտք որ անակնկալ պատուհասներու և անդիմադրելի ճակատագրութեանց արդիւնք են։ Առաջին կարգի չարեաց համար կրթութիւն, լոյս առաջարկեցին, երկրորդ կարգի չարեաց համար գթութիւն։

Ուստի յանկարծ յառաջ եկան մէկ կողմէ ուսման ու գիտութեան կայաններ, միւս կողմէ բարեպաշտական ազգաստաններ։ Գունդ գունդ բարերարներ ելան մարդկութեան սառապանքն ամոքելու միլիոններ տալով, դիտուններ ելան անոնց պատճառները հիմնովին ջնջելու։ Սակայն այս ճգանց չնայելով միշտ կ'տառապի մարդկութեան մէկ մասը, և թէև ընկերական նոյն ծանր խնդիրները դեռ անլոյծ կ'մնան, բայց դէթ բարոյական աշխարհը սրտաշարժ տեսարան մը կ'ընծայէ՝ մարդկութեան բարերարներու թիւը կ'աւելնայ և համեմատաբար կ'նուազի տառապանաց ծանրութիւնը։

Եւ, Դուք, Վսեմաշուք Տէր, թէև հեռու, Ձեր հարազատ Եղբօր հետ միահոգի ու միակամ էք, չէ թէ միայն հայութեան այլ բոլոր մարդկութեան բարերարներու դասէն կ'համարուիք, քանի որ հայութիւնն ալ ազգայնութեանց մէջ տեղ մ'ունի և Ձեզի պէս բարերարներու շնորհիւ աւելի բարձր տեղ մը բռնելու յոյսեր։ Ձեր ուշիմ գործունէութեամբ, և առատաձեռն տաղանդով ստացած նիւթական միջոցներէն մէկ մասը Ձեր սիրելի Ազգին շնորհելով փոխարէն մեծ բարոյական զօրութիւն, անհուն գոհունակութիւն, աղգային երախտագիտութիւն, անմահ անհուն և երկնային վարձատրութիւն կ'ընդունիք, որ աւելի մեծ, աւելի տևողական, աւելի շքեղ տրիտուրներ են քան թէ սորկական մեծարանք և փայլուն շքանշաններ։ Ասոնց փայլը վաղանցուկ է այլ պատմութիւնը մնայուն, այլ հայութիւնը միշտ կենդանի, քանի որ ձեզի պէս բարերարներ իր ծոցն ունենալով կրնայ պարծիլ աշխարհի առջև որ իր հարստութիւնը դիտէ գործածել նիւթական ու բարոյական աղէտք քուժելու, հիւանդին արտասուքը սրբելու և մտաց սնունդ տալու և չէ թէ ցուցամոլութեան և փառամոլութեան անհաստատ կոթողներ կանգնելու։

Դուք, Վսեմաշուք Տէր, այսօր ղօրութիւն մ'էք, գիտութեան հաստատը, և մինչդեռ այդ զօրութեան շնորհիւ այս հիւանդանոցը կ'վերականգնէք և Գրիգոր Լուսաւորչի տաճարը կը նորոգէք, հիւանդներու լայն հոլանոցն սենեակներ, մաքուր օդ, լոյս, արև, ճեմելիք և ամեն ողջապահիկ դիւրութիւններ կ'հայթայթէք, կ'լուծէք նաև հայութիւնը տառապեցնող խնդիրներէն մին, թշուառութեան խնդիրն, որ Եւրոպայի դահլիճներու ուշը կ'դրաւէ և անոր ընկերական վիճակը յարատև յուզման մէջ կ'պահէ։

Հայ ժողովուրդն իրեն նուիրական պարտաւորութիւն պիտի սեպէ շարունակ իր հոգևոր հովիւներուն, իր վարչութեանց, իր հոգաբարձութեանց ձեռօք այնպէս մատակարարել այս հիմնարկութիւնն որ վեհանձն բարերարացդ կոտակն անթերի դրծադրուի Ձեր ու Ձեր Ազգատոհմին հովանաւորութեան ներքև և միանգամայն երջանկութիւն ունենայ տեսնել Ձեր օրինակին հետևող բարերարներ որ իր ուրիշ մտաւորական պիտոյքն ալ լեցնելու փառասիրեն։

Լոյսն՝ որու այնչափ կարօտ է Հայն ու Հայաստան, ըստ կարգի նիւթական ղօրութեան կ'կարօտի որպէս դի ծագի, հայրենեաց բարոյական ու մտաւորական հիւանդութիւններ հեռացնէ բուժին և անով թշուառութիւնն ու մուրացկութիւնը դադրին, կարելի եղածին չափ, ինչպէս որ Ձեր ալ ազնիւ փափաքն է։

Վսեմաշուք Տէր, ազգային հին ու նոր բարերարներու տոհմը կ'շարունակուի Յակոբ ու Յովհաննէս Պարթեվեանց դերդաստանին մէջ և ներկայ հայ ժողովուրդը կրնայ միշտ յուսալ և պարծիլ բոլոր Հայոց առջև՝ որ Ձեզի պէս հաղորդիւտ հոգիներ ունի իր ծոցը, Հայութեան փառք և մարդկութեան արժանի անդամներ։

14 յունվար 1879 Զմիւռնիա։

Արդէն Դեր. Ս. Առաքելոյ մեր սահմանակցութենէ ետք՝ ժողովուրդն սկսած էր իր նուէրներն արձանագրել այն յիշատակագրին մէջ, զոր Դեր. Ս. Առաքելոյն Հոգաբարձութեան կողմէ ներկայացուցած էր ժողովրդեան և որու լուն նպատակն էր նուէրներու և նուիրատուներու անուանց հետ անվթար պահպանել սոյն սրտաշարժ

(Յ—Է—Ա)

հանդիսին յիշատակն նորաշէն հիւանդանոցի ապրեդրութեան մէջ, Այս նուիրատուութենէ զատ՝ կայէն նաև հիւանդանոցի դրան առջև դրուած գանձանակներ, ուր սրտաթունա ժողովուրդն իր լումայն կ'ձգէր, այնպէս որ սոյն աւուր նուէրներու գումարն 1300 արծաթ մէճիտի կ'հասնէր։

Դէտք է յիշատակել նաև որ հանդիսին կ'դտնուէին լատինաց և յունաց հիւանդանոցի հոգաբարձուները։

Մինչդեռ ժողովուրդը ցնծալով աչքէ կ'անցնէր հիւանդանոցի շքեղ սենեակները, սրահներն ու կարասիները, Դեր. Ս. Առաջնորդն Վսեմաշուք Սպարթալեանի, եկեղեցականաց և հոգաբարձուաց հետ հիւանդանոցէն ինչաւ պարտէզին մէջ շինուած նորաշէն խորհրդարանն, ուր դարձեալ սկսան ստորագրուիլ նուիրատուները և ամէն կողմէն կ'գային և առանձին շնորհակալութիւն կ'մատուցանէին հիւանդանոցի Վերհաղն Հիմնադրին։ Իսկ երբ Վսեմ. Սպարթալեան խնդալից բազմութենէ շրջապատեալ հիւանդանոցի արտաքին մեծ դռնէն դուրս ելաւ իր ռպարանն երթալու, ճանապարհի երկու կողմն դտնուած տուներու պատուհաններէն սկսան ծաղիկներ տեղալ իր գլխուն և փափկասիրտ բարերարն ժողովրդեան անպատում երախտագիտութենէ զգածուելով կ'արտասուէր։

Շատ չանցաւ ժողովրդեան կողմէ պատգամաւորութիւն մը ներկայացաւ Յառաջնորդարանն, ուր արդէն կ'դտնուէր Դեր. Առաջնորդն և երկու հեռագիրներ քաշուեցան 'ի Մանչեսթէր, մին առ Յովհաննէս Էֆէնտի ռարերարն Սպարթալեան և միւսն առ տեղւոյն վարդապետ Հովիւն, որպէս զի ինքն ևս տեղւոյն ազգայիններէն առնլով՝ երթայ խնդակցութիւն յայտնել հիւանդանոցի բացման առթիւ եղած հանդիսին համար,

Ամսոյս 17ին կատարուեցաւ Հիւանդանոցի բացման յատուկ հանդէս մ'ալ Զմիւռնիոյ հայ Տիկնանց կողմէ, հոյակապ շէնքին ու եկեղեցւոյն դաւիթներն ու սենեակներն արդէն զարդարուած էին մրտենիներով։ Կանայք

հանդիսին աւելի վայելչութիւն տալու և ամեն բան չքեղութեամբ տեսնելու համար իրենց կողմէ ուսանելու տիկիններ ընտրած էին։ Ս. Պատարագն՝ զոր կը մատուցանէր Գեր. Ղեւոնդ Ծ. վարդապետ Փիրղալիմեան, արդէն «Ազնուն» ժամանակն հասած էր և ահա երեւցաւ Վսեմ. հիմնադիրն հիւանդանոցի Յակոբ էֆէնտի։ Յիշեալ տոաներկու Տիկնայք ծաղկեայ պսակներով ընդառաջ եղան Վսեմ. Սպարթալեանի, երաժշտականներուն դարանն սկսաւ հնչել, ամեն կողմէ կեցցէներու աղաղակներն դղրդեցան, և այսպէս սիրոյ ու ողջունի ժամանակ Ազգի բարերարն եկեղեցի մտաւ։ Տիկնանց և օրիորդաց բազմութեամբ լցուած էր թէ եկեղեցին, թէ դաւիթն ու թէ հիւանդանոցն։ Պատարագէն ետք՝ եկեղեցական դասն հիւանդանոցի վերնայարկն ելաւ, ուր կ'գտնուէր Սպարթալեան և Հոդաբարձութիւնն և բոլոր յարկերն խոնեցան բազմութեամբ։ Արանց հանդիսին մէջ կատարուած ճառն Վսեմ. Սպարթալեանի կողմէ՝ կրկնուեցաւ և երբէմ՝ ետք՝ Գեր. Առաջնորդն սկսաւ ատենաբանել. իր ատենաբանութեան համառօտ իմաստն է այս.

«Ազնիւ Տիկնայք և Օրիորդք»

«Երեք օր առաջ կատարուեցաւ հանդէս արանց համար, քանզի հիւանդանոցի ընդարձակութիւնը հաղիւ պիտի բաւէր ահագին բազմութիւն մը պարունակելու։ Այս օր կը կատարուի հանդէս յատկապէս կանանց համար։

«Մեծ էր արանց բազմութիւնն, մեծ է նաև կանանցն և այս մի յայտնի ապացոյց է, որ ժողովուրդը կը սիրէ ազգային հանդէսները։ Դիտէք սրդէն, Ազնիւ Տիկնայք և Օրիորդք, թէ ինչ էր Հիւանդանոցի վիճակն երկու տարի առաջ և կը տեսնէք՝ թէ ինչ է այս օր։ Ընտրիւ Սպարթալեան հարազատաց։ Ինչ որ աչօք կը տեսնէք կարօտ չէ նկարագրութեան, իսկ ինչ որ արդէն պիտի զգաք և մտօք պիտի խորհիք զայն պարտք կը համարիմ բացատրել։

«Մարդն միայն իրեն համար ստեղծուած չէ այլ և իւր ընկերին համար։ Եթէ մի մարդ ըսէ՝ թէ միայն ես եմ, ես ու-

տեմ, ես խմեմ, ես հագուիմ, ես հանդիստ սպրիմ եւ այն մարդն անձնասէր է եւ ամենեւին ուրախութիւն չունենար։ Թերեւս իւր նիւթական կեանքն կ'ընդարձակի, բայց իւր հոգեւոր ու բարոյական կեանքն կը սեղմի, կը նուազի, կը ցամքի։ Իսկ այն մարդն որ իւր ունեցածէն, հարստութենէն, տաղանդէն, հանճարէն, բաժին կը հանէ իր ընկերին՝ իւր կեանքն կ'ընդարձակէ նաեւ բարոյապէս, ուրախութիւն կըզգայ, փառք կ'ընդայ եւ կը մեծանայ։

«Միթէ ուրախացած չէ՞ Ձեր սիրտն երբ աղքատի մը օգնած էք, հիւանդ մը մխիթարած էք, վշտացեալ մը սփոփած էք, միթէ գոհացած եւ ուրախացած չէ՞ք, երբ ուրիշ մը Ձեզ օգնած է, Ձեզ մխիթարութիւն եւ սփոփանք տուած է եւ։ Այս մի սուրբ օրէնք է. մարդիկ պարտաւոր են միմեանց օգնել, օգնել սիրով եւ յօժարութեամբ, օգնել իրենց կարողութեան չափով, քանզի ով որ կ'օգնէ օգնութիւն կը գտնէ եւ ծարաւին մատուցուած մի բաժակ ջուրն անգամ անվարձ չէ Աստուծոյ առջեւ։

«Գիտէք դուք, որ Սպարթալեան Եղբարք, ոչ թէ մի բաժակ ջուր, ոչ թէ մի ման կերակուր, ոչ թէ մի մասնաւոր բնակարան, այլ մի ընդարձակ հիւանդանոց կը նուիրեն այս օր եւ այն ոչ թէ մի մարդու, երկու մարդու, այլ ամբողջ Ազգին մէջ գտնուած հիւանդաց ու տառապելոց եւ այն ոչ թէ մի կամ երկու աւուր համար այլ մշտնջենապէս։

«Այսպիսի մեծ բարերարութիւն անշուշտ եւ մեծ վարձու արժանի է եւ մեծ շնորհակալութեան։ Գիտէք դուք որ պատերազմի դաշտին յաղթանակաւ դարձողներն կը պսակեն դափնիներով եւ ծաղիկներով։ Դարնիներն ու ծաղիկներն աւելի մարդկութեան բարերարներուն պէտք են։ Պատերազմ արտասուք ունի, արիւն ունի, մահ ունի. բարերարութիւնն սփոփանք ունի, խինդ ունի, կեանք ունի։ Պատերազմի դիւցազունն սպաննելով դարնի կ'ընդունի, բարերարութեան դիւցազունն՝ անունդ տալով, կեանք տալով, յոտին կանգնեցնելով՝ դարնի կ'ընդունի։ Ո՞վ չը գիտէ, թէ կենդանութեան սիրոյք մատակարարելն աւելի մեծ գործ է քան թէ սպաննելն։

«Դուք, Աղնիւ Տիկնայք եւ Օրիորդք, դարնի պսակներ ու ծաղկեփունջեր նուիրեցիք Վսեմ. Սպարթալեանին, դուք յանձն Բարերարին բարերարութիւնը քաջալերեցիք եւ պսակեցիք։ Դուք

ցոյց տուիք որ առաքինութիւնն ճանաչել և պատուել դիտէք։ Ձեր նուիրած ծաղիկներն Ձեր աղնիւ սրտի երախտագիտութեան նշանն է։ Այդ ծաղիկներով դուք Ձեր սիրաը նուիրեցիք, ինչպէս որ Սպարթալեանք՝ հիւանդանոցին հետ իրենց սիրտն Աղդին նուիրեցին։ Ը՞նչ կայ քան զայս մեծ ուրախութիւն, երբ սրտերն իրարու կը նուիրուին, երբ բարերարութիւն և երախտագիտութիւն միրար կը գրկեն և միրար կը համբուրեն։

«Դուք աւելի դդայուն և փափկասուն էք, Աղնիւ Տիկնայք և Օրիորդներ, և ինչպէս որ դուք աւելի կ՚ըդդաք հիւանդաց ու տառապելոց ցաւն ու վիշտն, նոյնպէս և աւելի կ՚ըդդաք Սպարթալեանց ըրած բարեգործական մեծութիւնն։

«Դուք այս օր գթութեան մեծ ասպարէզ մ՚ունիք բացուած Ձեր աչաց առջև, բարեգործական ընդարձակ տուն մ՚ունիք Ձեզ համար։ Դուք ոչ թէ միայն այսօր բացման հանդիսի փառաւոր յիշատակարանին մէջ պիտի անմահացնէք Ձեր անունները Ձեր նուէրներով, այլ և ամեն ժամանակ, ամեն տարի պիտի յիշէք սոյն հիւանդանոցը և բաժին պիտի հանէք հիւանդաց։ Ձեր արտմութեան ժամանակ, Ձեր վշտաց ժամանակ պիտի յիշէք հիւանդանոցն, և անշուշտ սփոփանք պիտի դտնէք Ձեր վիշտերուն։

«Երբ հադուիք, կապուիք և զարդարուիք, յիշեցէք որ հիհիւանդներ ունիք, քանի մը կանդուն կտաւ, չիթ մը, երեսսրբիչ մը, դվսանոց մը, զոյդ մը դուլպայ ևս տառապելոց համար զրկեցէք, որպէս զի հիւանդանոցի հանդերձատունն շարունակ ճոխ լինի Ձեր նուէրներով, Ձեր յիշատակներով։ Ձեր ուրախութիւնն կրկին կը լինի, երբ Ձեր զարդարանաց հետ անհանդերձներու մերկութիւնն ևս յուշ ածէք և հոգաք։ Այս եղանակաւ դուք աղօթողներ կը պատրաստէք Ձեր կենաց համար, Ձեր զաւակաց համար, Ձեր բարեկեցութեան համար։ Դուք ապրած կը լինիք ոչ թէ միայն ձեզ համար այլ և կարօտելոց համար, հիւանդաց համար, վշտացելոց համար։ դուք անձնասէր չէք լինիր այլ աստուածասէր և ազդասէր, և գիտէ՞ք արդեօք թէ ի՜նչ անհամեմատ դարդեր են կնոջ համար աստուածասիրութիւնն ու ազդասիրութիւնն։ Գիտէ՞ք արդեօք թէ ի՜նչ մեծ կարօտութիւն ունի մեր Հայրենիքն, մեր Աղդն աստուածասէր ու ազդասէր Տիկիններու։ Եւ դիտէ՞ք արդեօք որչափ ուրախացուցիք մեզ, Աղնիւ Տիկիններ և Օրիորդներ։

Սպարթալեան Եղբարք իրենց բարերարութեամբ յուսադրեցին զմեզ, որ մեծածորթութեան ոգին մեռած չէ Հայ սերունդի մէջ։ Դուք, Հայ Տիկնայք, քաջալերեցիք զմեզ թէ դիտէք ճանաչել և պատկել բարին ու վսեմն։

«Աղրի՛ն Սպարթալեանք, կեցցե՛ն Հայ Տիկնայք ու Օրիորդք։

Դեր. Առաջնորդին առենախօսութենէն ետք՝ երգեր երգուեցան և ապա առենախօսել սկսաւ Փիրզալէմեան Դեր. Ղեւոնդ վարդապետն, շնորհակալութիւն մատուցանելով Մ. Առաջնորդին, Սպարթալեանց և համօրէն Տիկնանց։ Ապա անդամատան կատարուեցաւ քնար առաջին կարգի և երաժշտական խումբն դաշնաւորութեամբ Օրիորդ Քէօլէեանի սկսաւ երգեր նուագել։ Այնուհետև Մեծ. Դր. Էֆէնտի Զիլինկիրեանի յօրինած ճառն Տիկնանց կողմէ՝ կենդանի ձայնով և աշխուժով կարդաց Օրի. Կուռնէլիա Փափազեան, Հռիփսիմեան վարժարանի վարժուհին և անոր պատճէնն է այս.

Սիրելի Տիկիններ և Օրիորդներ,

Մեր ամենուս ամուսինները, եղբայրները քանի մ՚օր առաջ այս վառուռոր սրահին մէջ համասիրտ և համակամ հաւաքուեր էին սուրբ պարտ մը կատարելու, այս հոյակապ հիւանդանոցին բացման հանդէսը տօնելու, և իրենց սրտագին շնորհակալութիւնն յայտնելու համար Վսեմաշուք Սպարթալեան Եղբարց, որք իրենց մարդասիրութեան և առատաձեռնութեան արդեամբն այսպիսի ապաստանարան մը կանգնեցին՝ հիւանդներու հառաչքը դադրեցնելու, աղքատներու և թշուառներու տառապանքը մեղմելու և յուսահատ տնանկներու արտասուքը սրբելու համար։

Մենք որ այն աղգային երախտագիտութեան զգացումներուն հաւատարմապէս թարգման կեցողներուն կողակիցները, մայրերը և քոյրերն ենք, մենք որ միևնոյն շնորհապարտ յուզումներով համակուած մեր սիրտերու բաղխիլը կ՚զգանք՝ թշուառութեան այսպիսի պատսպարան մը կանգնող ճշմարտապէս քրիստոնէական առաքինութեան մը առջև, աններելի յանցանք մը գործած պիտի ըլլայինք՝ եթէ անտարբեր մնայինք,

մեր բնական զգայնութեան անարգանքն պիտի հանդիսանայինք՝ եթէ դեղեցիկ միևնոյն նուիրական պարտաւորութիւնը կատարելու։

Եւ քանի որ կեանքը մարդկութեան մեծագոյն մասին համար վիշտերու և ցաւերու հիւսած մ'է, քանի որ աշխարհս մշտընջենական կռիւի ասպարէզ մ'է, ուր գիտութիւնը՝ տգիտութեան, հարուստը՝ աղքատին, հզօրը՝ տկարին դէմ յաղթանակ կը տանի միշտ՝ խղճալիներու, կարօտեալներու և հիւանդներու թիւը աւելցնելով, մինթէ կարելի՞ է անտարբեր մնալ այսպիսի դիտասիրական հաստատութեան մը նկատմամբ՝ որ մարդուս թշուառութիւնը ամոքելու կը սահմանուի, մինթէ կարելի՞ է անզգայ մնալ և համրաբար լռել թէ արական և թէ իգական սեռի թշուառ դասին համար այսպիսի հոյաշէն ապաւէն մը կանգնող անշահախնդիր կարեկցութեան մը առջև։ Ներկայ ժամանակիս մէջ, քաղաքակրթութեան ամենէ մեծ կեդրոնները սեպուող շատ երկիրներու մէջ, մինչդեռ ինքնամոլութիւնը՝ ընկերսիրութեան, շահու տենչը՝ առատասրտութեան, հաշիւը՝ զգացումի, և պատճառաբանութիւնը հաւատքին յաջորդելու կը նկրտի 'ի սուգ և 'ի ցաւ ճշմարտապէս առաքինիներու, մինչդեռ, կ'ըսեմ, անձնական շահն ընդհանուրին շահէն նախադաս սեպուելու և թէ արանց և թէ կանանց գործերուն միակ շարժառիթն ըլլալու կը միտի տրտմապէս, և երբ միւս կողմէն երկու դիտասիրտ եղբարց, երկու առատաձեռն պայազատաց, վերջապէս ազգին երախտագիտութիւնը մշտնջենապէս պահանջելու իրաւունքը վաստկող Սպարթալեան Յակոբ և Յովհաննէս էֆէնտիներու բարեգործութեան անմահ յիշատակ մը թողուլը կը տեսնենք, մինթէ կրնա՞նք չուխտել ընդ միշտ շնորհապարտ դտնուելու, անոնց անուններուն մեր ամենուս սրտին մէջ անմեռ երախտագիտութեան արձան մը կանգնելով, և իրենց յիշատակը սիրունդէ 'ի սերունդ աւանդելով։

Քաւ լիցի։

Ուրեմն այս հանդիսաւոր պարագայիս մէջ ամենքս ալ ծայնակցինք մեր երախտագիտական օրհներգութիւններով, աղդային երկու բարերարաց և իրենց ազնիւ դերդաստաններուն բարօրութեան համար սրտապէս աղաչենք թշուառներու և աղքատներու պահապան Աստուծոյ, որոյ ոչ միայն նուիրական

պարտ մը կատարած, ոչ միայն մեր սիրաները՝ իրր տրիտուր քրիստոնէական դիմադրութեան նուիրած կ'ըլլանք, այլ նաև առաքինութիւնը և ճշմարիտ մարդասիրութիւնը խրախուսած կ'ըլլանք։

Սակայն, Տիկիններ, մեր Երախտագիտական պարտքը այսօր խօսքով կատարելէ ետք մեզ կը մնայ ուրիշ պարտք մ'ալ կատարել գործքով, և մարդկութեան ծառայել։

Մարդասիրութեան ու բարեգործութեան դաղափարը և ըզգացումը աչխատինք ներշնչելու մեր ամուսիններուն, եղբայրներուն, որպէս զի ապագային համար Սպարթալեան Եղբարց վսեմ օրինակին հետևողներ պատրաստած ըլլանք։

Ուր որ անոք և անօգնական աղքատ մը կայ, ուր որ օրուան հացի կարօտ հիւանդ մը կայ, ուր որ բաղդէն հալածուած և մարդերէ լքուած յուսահատ մը կայ, ուր որ անտէրունչ որբ մը կայ, ուր որ մթութեան, ցուրտին, առանձնութեան դատապարտուած պառաղեալ մը կայ, վերջապէս ուր որ մոլորեալ և տարերաց անդիմութեան մատնուած պանդուխտ ուղևոր մը կայ, հոն դիմութեան հասնելու, սիրելու, գթալու, ողորմելու, ոփոփելու և կարեկցելու պարտքը հեթանոսութեան ժամանակներէ մինչև մեր օրերը կատարուած է՝ լեռներու, կիրճերու և դագաթներու վրայ, անապատներու մէջ հիւանդանոցներ, հիւրանոցներ, պատսպարաններ, որբանոցներ և դպրոցներ հաստատելով։

Լուսաւորութեան ունիրաժեշտ պիտոյից մին այս բարեսաչատական հիմնադրութիւնն է, յառաջդիմութեան արժանի աղգ մ'ըլլալու պայմաններէ մին թշուառին կարեկցիլն է, և Վսեմաշուք Սպարթալեան պայազատներն Զմիւռնիոյ Հայոց լուսաւորութեան մի այս պիտոյքը հոգալով՝ յառաջդիմութեան պայմաններուն մին մեզ շնորհելով՝ այսօր մեզ ամենքս ալ պարտաւորեցին երախտագիտութեամբ աղաղակելու։

Ապրի՛ն Սպարթալեան Եղբարք, Ապրի՛ն Տիկնայք Սպարթալեան, Ապրի՛ն Սպարթալեան ընտանեաց անդամները։ Ապրի նոյնպէս մեր Գերապատիւ Հայր Մելքիսեդեկ Մուրատեան Սրբազանն որուն առաջնորդութեան ժամանակ և հոգեշահ խրատներուն շնորհիւ վեհ սիրաներն այսպէս կը յուզուին և արդահատութեամբ կը համակուին նկուն և լքուն անձերու համար։ Եւ իցիւ թէ մարմնային հիւանդութիւնը և աղքատութիւնը

դարմանուելու սահմանուած այս հոյակապ հիւանդանոցին պէս նաև մասային ու բարոյական հիւանդութեանց դարմանը տուող երկսեռ ուսումնարաններու բացման հանդէսներն ալ կատարելու բաղդը ունենայինք օրին մէկը։

Սոյն ճառի աւարտումէն ետք՝ ադամանի մը թռցուցին կեցցէներով և Օրի. Հռիփսիմէ Ճէզայիրլեան՝ նախակրթարանի վարժուհի, կարդաց ոտանաւոր մը, Մեծ. Պ. Սահակեան Զաքրեանէ յօրինուած, և որ՝ օրինակն է.

Հոլանդեանն ոգի մ'այսօր կ'ինչէ յայս Ցարկ զուարթադէմ,
Զորս կոչէ պատած երկնաբընակ Հրեշտակաց խումբ վսեմ.
Արեգական ճառագայթ ցոլան դէմքին վերայ շնորհալի,
Սոյն այս Ոգեակ քաջածանօթ է Ազգային կաճառի։

Պարթեւազուն ցեղէ է նա արթուն Հովիւ Հայ Ազգին
ԵՍՊԱՐԹԱԼԵԱՆ ԵՂԲԱՐՑ գործոց կայ 'ի յեթեր 'ի զննին,
ԳՐԻԳՈՐԻՈՍ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ անմահ պաշտպան մեծ Ցարկիս
Երկնայնոց հետ կ'օրհնէ Վեհից գործս՝ Աստուծոյ հաճելիս։

Իւր ձեռք բռնած ճառանչափայլ բերէ ՊՍԱԿ անթարշամ,
Հիանալի՛ տառերով սոյն խօսքեր դրոշմուած են վերան,
«Երանի՛ են որք խորհին զաղքատն մինչև կենաց վերջ,
Անոնց դըլուխ այսպէս Պսակ պիտի հիւսի Երկնից մէջ։»

Պարթեւազունն կարդայ զայս ճայն Բարերարաց սոյն Ցարկին,
«Սեղո՛ւհդ, երբէք չեն մոռացուր Ձեր այդ գործեր Արարչին.
Առանք միայն Անմահութեան ըսՁեզ կ'ընեն արժանի,
Աստուած փառաւորի և դրկէ իւր սուրբ Հոգի։

Նս և համայն Զուարթունք Երկնից ըսքանչացած յայդ ձեր տենչ
Նկանք սոյն յարկ այցելելու, տալ Վեհաղանցդ մեր օրհնանք.
Այդ գործք միայն են արդարև փա՛ռք ճշմարիտ մարդկութեան,
Զայդ՝ մարդասէր Յիսուս Ձեզմէ կը պահանջէ մի միայն։

Այն մեծաղօր, մեծափարթամ ազնարհակաք քաջազունք
Որ իրենց դանձ չընայեցին փառաց համար վաղանցուկ,
Երբէք իրենց սին խորհրդովք չ'եղան հաճոյ Արարչին,
Աստուած կ'օրհնէ այն ոգիներն՝ որ կան նեցուկ թշուառին։

Զեն ժառանգորդ Անանց բարեաց եղծուն փառաց ցանկացողք,
Որ մարդկութեան են Մեկենասք՝ անոնք հոս են մեզ զովողք։
Ձեր այդ գործոց համար դիտցէ՛ք մեծ տըրիտուրք են յԵրկին,
Ձեր վեհ խորհուրդք դերազանցեն մեծ յաղթանակք աշխարհին։

Որ թշուառին սրբէք արցունք, վշտաց կանգնիք մխիթար,
Բիւրաւատիկ 'ի յԱնմահէն պիտ՝ ընդունիք վարձ արդար։
Անմահ էք դուք Ազգին 'ի ծոց, Ձեր այդ վրսեմ յիշատակ
Դարուց 'ի դարս պիտի մընայ, համայն սիրտք Ձեզ օրհնաբանք։

Կեցցի՛ք յաւէրժ ԸՍՊԱՐԹԱԼԵԱՆ երկու Եղբարքդ հարազատ
Երկինք Վեհիցդ կեանք երկարէ, նոյնպէս որդւոցդ պայազատ,
Ահա տանիմ Ձեր սրտից ուխտ 'ի սուրբ Աթոռ անմահին
Թո՛ւր երանի որք հեռուին առաքինի Ձեր շաւղին։

Ազգին Ոգին՝ բարերարք են, Անոնցմով Ազգն պարծենայ
Պատուութեան մէջ յաւերժական անոնց անուն կը մընայ։
Տալով առատ վեմ օրհնութիւն Հարազատացդ երիտքին,
Մընա՛ք բարեաւ, կ'երթամ մաղթել կենաց համար Ձեր անդին։

Յետոյ օրիորդ մը դարձեալ պսակ մը բերաւ և մատոյց Վսեմ. Սպարթալեան էֆէնտիին։ Դարձեալ կըրկնուեցան կեցցէներն, և տասներկու Տիկնայք՝ բոլոր տիկնայց կողմէ մտուեցան և շնորհակալութիւն մատուցին Սպարթալեանի և շնորհակալութիւն ընդունեցին։

Քիչ մ'ետք՝ Տիկնայք սկսան սոորագրուիլ նուիրատուաց յիշատակարանին մէջ, որու կ'հսկէին Տիկնայք Սպարթալեան և Նայեան (հարսունք)։ Իսկ հիւանդանոցէն դուրսը դրուած դանձանակին վրայ հսկող էին, Տիկնայք Աղազարեան, Աւագեան և Թէքպէյեան (հոդաբարձուհիք)։ Տիկնանոյ կողմէ նոյն օրը տրուած նուէրներու դումարն 600 արծաթ մէճիտի հասաւ։

Մինչդեռ երդեր կ'նուագուէին և Տիկնայք հիւանդանոցի ներսն ու դուրսը խռնած էին՝ Դեր. Առաջնորդն Վսեմ. Սպարթալեանի և Հոդաբարձուաց հետ խորհրդարան իջաւ և այն տեղ բազմութիւն կանայք կու գային և շնորհակալութիւն կ'մատուցանէին Սպարթալեանի։

Կէս օր էր և երբ Սպարթալեան ելաւ տուն երթալու՝ ճամբան երկու կողմէն կեցցէներու աղաղակներն

սկսան բարձրանալ պայծառ օդին մէջ և այսպէս վերջացաւ այս փառաւոր հանդէսն, որու նմանը բնաւ տեսած չէր Զմիւռնիոյ Հայ հասարակութիւնն իր դաղթականութեան օրէն ի վեր։

Ամսոյս 16ին Զմիւռնիոյ Հայ ժողովրդեան կողմէ բազմաթիւ սորագրութեամբ ուղերձ մ՚ուղղուեցաւ առ Վեհ. Սպարթալեան Յակոբ Էֆէնտի։ Այս ուղերձին օրինակն է.

Գերընթեր Բարերար

Ամսոյս 14ին կատարուած շքեղ հանդէսն Ձեր կանգնած Սուրբ Լուսաւորչի հոյակապ հիւանդանոցին մէջ, բոլոր Հայ հասարակութեան եռանդագին ցոյցերն, ազգին և ազգային վարչութեան կողմէ, թէ մեր հոգևոր Հովուին և թէ այլոց արտասանած խանդագին խօսքերն, Ձեր բարերար հոգին հրաշակերտելու բաւական շնամարելով այսօր այս ընդհանուր ուղերձը կը մատուցանէ Ձեզ բոլոր Զմիւռնիոյ Հայ ժողովուրդը, իր խորին երախտագիտութեան զգացմունքը յայտարարելու։

Մարդկութեան բարերարներն Նախախնամութեան պարգևներ են, ժողովրդոց կենդանութեան և լուսաւորութեան հերոսներ են, ու արժանի՝ չէ թէ միայն բանաւոր ու դրաւոր երախտագիտութեան հանդէսներու, այլ փառաւոր արձաններու։

Վսեմաշուք Տէր, Զմիւռնիոյ Ժողովուրդը Ձեր և ձեզի նման բարերարներու վսեմագործերով պիտի պարծի, մարդկութիւնն զՁեզ իր անմահ բարերարաց կարգը պիտի դասէ. վասն զի դուք սոսր բազմատեսակ վիշտերուն մէկ մասը վեհանձնաբար սիրելով՝ համապատիւ կը հանդիսանաք այն բարերարաց որ մարդկութեան լուսաւորութեան համար զոհեցին հանճար ու կեանք։

Ուստի կ՚աղաչենք, Վսեմաշուք Տէր, ընդունելով այս ինքնաբեր ուղերձն, որ մեր ջերմ սիրտերուն տկար մէկ արտայայտութիւնն է, և հաւատալ եղիք որ Հայ ժողովուրդն Ձեր վեհանձն բարերարութեան առջև թէ ներկային և թէ ապագային մէջ անմեռունչ արիներդու պիտի մնայ երկու Հարազատ Եղբարցդ։

(Սրբոյ Գրիգոր)։

Գրեթէ նոյն իմաստով ուղերձ մ'ալ ղրկուեցաւ Մանչեսթէր՝ առ Վ. սեռ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեան։

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐՆԸԳ

Այս քաղաքը կ'գտնուի Եունդ սարի մօտ բլրի մը ստորոտը, Պերկամայէն 3 ժամու հեռու։ Քաղքին արևելեան կողմն է, մէկ ու կէս ժամ հեռու, Տէյիրմէնտէ-էլի անուն տաճկարնակ գիւղը, և ասոր մօտ Գէնէ-էրկա-սույու աղբիւրը, որու ջուրը խիստ պաղ է և լուծողական զօրութիւն ունի, երբոր տաքցընելով խմուի։ Նոյնպէս չորս ժամ հեռի դէպ 'ի հարաւ Իպրահիմ օղլու գիւղին մօտ Տալա-սույու աղբիւր մը կայ, որու ջուրը ջրդողներու բոյժ կ'տայ։

Գընրքի բնակիչներն հայ, յոյն, տաճիկ և չէրքէզ են. օդը բարեխառն, բերքերը այլև այլ արմտիք. նշանաւոր են գինին, օղին, սեխն ու ձմերուկը։ Գընրքի մէջ 105 տուն կայ Հայոց, որոցմէ 132 այր, 147 կին, 100 տղայ և 47 աղջիկ են։ Առ հասարակ հայ բնակիչներն են երկրագործ, հողագործ, երկաթագործ, դերձակ, մսագործ, կօշկակար և մէկ քանի վաճառական։ Ունի եկեղեցի, առաջնորդարան, նորաշէն դպրոց մը Յովհաննէս Պողոսեանի ծախքով շինուած աղջկանց համար, վարժարան մը Հայկազեան անուն ուր կ'յաճախեն 46 աշակերտ։ Իր տարեկան տղղային մուտքն է զանազան կալուածքէ և տոկոսէ 187 մէճիտ, որու կէսը դպրոցի ծախուց յատկացած է։ Գընրքի հայերն մնայրենի լեզուն բոլորովին մոռցած են և տաճկերէն կ'խօսին։

ՎՐԻՊԱԿ

317 երեսի Ծանօթութեան մէջ էրուսաբար մանաչոզվի Տեղեկութիւն տեղ պէտք է կարդալ վարդապետութեան, իսկ անոր վերապիրին տեղ պէտք է կարդալ Իրուսաբար Մանաչոզվին վերապիրը։

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
321	7	Եկեղեցոյն դաս պիտրակոութեան	Եկեղեցոյն և դաս պիտրակոութեան
322	15	դիտողութեան	տեղեկութեան
326	5	դէմ	հէմ

Խմբագիր—տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՑ տարեկան դիմեն է կանխիկ Զմիւռնիոյ համար 3 ½, իսկ օտար երկրի համար 4 արծաթ մէջիտիէ։

Խմբագրութեան վերաբերեալ ամէն նամակ, ձեռագիր պէտք է ուղղել առ խմբ–անօրէն Մ. Մամուրեան, Սելվիլի խան, վերի յարկ թիւ 17։

Բաժանորդ դրուիլ ուզողք կրնայ դիմել, առ

Խմբագիր Տնօրէն, Զմիւռնիա,

Գործակալ Մանաժողովն, Կ. Պոլիս Եէնի Ճամի փողոց,

Մեծ. Կարապետ Պ. Շէրիտճիեան, Աղեքսանդրիա,

Մեծ. Յ. Յ. Յովակիմեան, Մանչեսթէր,

O. O. Ovaghimian Esqr. Manchester: